

## ՄԵՐ ԱՆԿԻԿՆԵՆ

### ՏԵՐ ԿԱՆԳՆԻՆՔ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԳԻՐԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մշակոյթի ամիս անուանած ենք Հոկտեմբեր ամիսը:  
Ինչպէս ամէն Նոր Տարուայ սեմին, կամ ազգային անկիւնադարային թուականներուն՝ Վարդանան, Ապրիլ 24, Սարտարապատ, Հայրենիքի Անկախութիւն, Եւայլն, աւանդութիւն է դարձած խորը հաշուեկշռային ներհայեցողութեամբ խորհրդածութիւններ կատարել, միեւնոյն տարողութեամբ եւ կարեւորութեամբ, կ'ունենանք մտորումներ Մշակոյթի օրուան առիթով, ի փառս մեր ազգի յառաջընթացին եւ լինելիութեան:

Տարակոյս չկայ՝ լեզուն եւ գիրն են ժողովուրդի մը գոյութեան պահպանման հաստատու անվիճելի երաշխիքները: Անոնք են ազգի մը շինարարական, կառուցողական եւ ստեղծագործական տաղանդին ձեւ, փոքրամեծ արտայայտութիւն տուող հրաշագործ լծակները: Անոնցմով է որ կ'երկնուի եւ կը մշակուի ազգի մը էութիւնը: Անոնցմով է որ կը պայմանաւորուի անոր բեղմնաւոր անը, հոգեմտաւոր զարգացումը, նաեւ՝ անոր լինելիութեան կարողականութիւնը:

Լեզուն ու գիրն է հաղորդակցութեան հրաշագործ միջոցը ազգի մը գաւակներուն միջեւ: Անով է որ, իր լիակատար, անմնացորդ մաստով, ծնունդ կ'առնէ ազգային մշակոյթը, որ իր մէջ կ'ամփոփէ ազգի մը նախախնամեալ ամբողջական արժանիքները, գոյութեան պահպանման գրաւականները: Անոնք են որ, լեզուի եւ գրքի, մէկ խօսքով մշակոյթի քաղաքացիական յորտման միջոցաւ, անցեալը՝ ներկային եւ ներկան՝ ապագային կը կամրջեն: Իրարու կը կապեն դարաւոր ինն, ու այժմեան ներկայ, եւ ապագայ սերունդները, իրարու փոխանցելով ազգային աւանդութիւններ, սովորութիւններ, նկարագիր, պատմութիւն, գրականութիւն, գեղարուեստ, նարտարապետութիւն ու գիտութիւն, որոնք կը գործնական գոյատեւելու կամքը, դիմադրական ոգին եւ հայրենասիրութիւնը:

Եթէ չ'ըլլան լեզուն եւ գիրը, անգոյ է մշակոյթը՝ ապա ուրեմն կորուստի ենթակայ է ազգը: Մեծ է թիւը անոնց, որոնք աշխարհակալ հզօր կայսրութիւններ եղան, բայց չկան այսօր: Զննուած են աշխարհի երեսներ, որովհետեւ անոնք չունեցան գիր ու մշակոյթ: Իրողութիւն է նաեւ հակառակը. գտնուեցան տկար, անզօր եւ օտարի ենթակայ ազգեր, որոնք գոյատեւեցին դարեր, կը գոյատեւեն ներկայիս ու կոչուած են

Շաբ.ը էջ 17

## ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ ՆԱՄԱԶԻ ԱՂՕԹՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽԱՉԸ ՏԵՂԱԴՐՈՒԵՑԱՒ ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՎՐԱՅ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը «քաղաքական սաղարան» որակեց Անիի Մայր տաճարէն ներս թուրք ազգայնականներու կողմէ նամագի արարողութիւնը:

«Վրդովմունքով տեղեկացանք, որ թուրքիայի իշխանութիւնների արտօնութեամբ Հոկտեմբերի 1-ին «Ազգայնական Շարժում» կուսակցութեան կողմից նամագ է կազմակերպուել Անիի Հայոց Սուրբ Աստուածածին Մայր տաճարում», - ըստ լած է Հոկտեմբեր 2-ին Մայր Աթոռի տարածած հաղորդագրութեան մէջ:

«Դա փորձ է ժխտելու հայկական պատկանելութիւնը Անիի Մայր տաճարի, որ աղօթագրկուել է Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ գործողութիւնները, որոնք սերմանում են անհանդուրժողութիւն եւ հայատեացութիւն: Բացարձակապէս անընդունելի է նաեւ քրիստոնէական սրբավայրի տրամադրումը նամագի համար՝ այն դէպքում, երբ հետեւողականորէն արգելու է քրիստոնէական ժառանգութեան իրաւատէրերին պաշտամունք մատուցել իրենց իսկ տաճարներում: Այսպիսով, թուրքական իշխանութիւնները շարունակում են իրենց քայլերը՝ ուղղուած հայկական յիշատակների ոչնչացմանը եւ հայոց պատմական սրբավայրերի ու մշակութային ար-



Թուրք ազգայնականներու աղօթքը Անիի Մայր Տաճարէն ներս

ժէքների իւրացմանը», - կ'աւելցնէ Մայր Աթոռը, շեշտելով, որ թուրք ազգայնականներու այս քայլը «որեւէ առնչութիւն չունի հոգեւոր-բարեպաշտական զգացումների եւ կրօնական ազատութեան ու իրաւունքների հետ»:

Հարիւրաւոր թուրք ազգայնականներ «Ազգայնական Շարժում» կուսակցութեան առաջնորդ Տեւէթ Բահչէլիի գլխաւորութեամբ Ուրբաթ, Հոկտեմբեր 1-ին իսլամական աղօթք կատարեցին միջ-

նադարեան հայկական մայրաքաղաք Անիի Մայր տաճարէն ներս:

Միւս կողմէ, յայտնի դարձաւ, որ Աղթամարի Սուրբ Խաչ հայկական եկեղեցւոյ զմբէթին վերջապէս խաչ տեղադրուած է:

«Կարելի է ասել, որ ուղղակի կապուած են այդ երկու իրադարձութիւնները, ինչպէս նաեւ կապուած են նախորդ՝ առանց խաչի թուրքերի կազմակերպած շոյին»,

Շաբ.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՀԱՅ ԳԵՐԻԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Հոկտեմբեր 5-ին Ատրպէյճանի Պաշտպանութիւն նախարարութիւնը եւ Ռազմական ոստիկանութիւնը հաղորդագրութիւն մը տարածեց, որու համաձայն ինքնասպան եղած է ատրպէյճանական կողմի մօտ գերի ինկած Մանուէլ Սարիբէկեանը:

20-ամեայ Մանուէլ Սարիբէկեան Գեղարքունիքի մարզի ձամբարակ գիւղի բնակիչ էր: Սեպտեմբերի 11-ին ճամբան կորսնցնելով՝ իր ձիով պատահաբար անցած էր հայ-ատրպէյճանական սահմանագիծը եւ գերի ինկած:

ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնն օրը տարածուած յայտարարութեամբ մը եկաւ մերժելու ատրպէյճանական կողմի բացատրութիւնը:

«Չնայած հայկական կողմի պարագաբանումներին, որ երիտասարդը սովորական հովիւ էր, որը մոլորուել էր հատել էր հայ-ատրպէյճանական սահմանը, Ատրպէյճանը յամառօրէն պնդում էր, թէ Սեպտեմբերի 11-ին սահմանից այն կողմ յայտնուած Սարիբէկեանը դիւերսանտ է: Այնուհետեւ ատր-

պէյճանական քարոզչամեքենան համացանցով տարածեց մի տեսանիւթ, որում հայ երիտասարդն ասում էր, թէ, իբր, իրեն յատուկ պատրաստել են Ատրպէյճանում հասնելու համար: Սակայն այդ կադրերում յստակ երեւում էր, որ երիտասարդը ենթարկուած էր կտտանքների», - ըստ լած էր Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան մէջ:

«Որեւէ հիմք չունենալով հաւատարմութեան հայ երիտասարդի մահուան վարկածի իսկութեանը՝ ՀՀ ՊՆ-ն իր մտահոգութիւնն է յայտնում այդ առնչութեամբ, գտնելով, որ Մ. Սարիբէկեանի ողբերգական մահուան պատասխանատուութիւնը ամբողջութեամբ ընկնում է նրան գերեզմանը երկրի՝ Ատրպէյճանի վրայ», - կը յայտնէ հայկական կողմը, հրաւիրելով միջազգային կառուցները եւ մասնաւորապէս Կարմիր խաչի Միջազգային կոմիտէն, որ ուշադրութիւն դարձնեն Ատրպէյճանի կողմէ «Ռազմագերիներու հետ վարուելակերպի մասին» օրէնքներու խախտումներուն:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԼԱՐՈՒԱԾ ՎԻՃԱԿԻՆ ՊԱՏՃԱՌԱՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՅԵՏԱԶԳԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ԱՅՅԸ

Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրի յետաձգած է Հոկտեմբեր 7-ի Հայաստան կատարելիք այցելութիւնը, իր երկրէն ներս տիրող ներքաղաքական լարուած վիճակին պատճառաւ:

Այս կապակցութեամբ Լիբանանի խորհրդարանի անդամ, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Սեպուհ Գալիփեան հայաստանեան «Հայիւլ» կայքէջին յայտնած է որ, վերջին օրերուն բաւական սրած է իշխանութեան եւ ընդդիմութեան կողմնակիցներու յարաբերութիւնները: Լիբանանի երկրորդ մեծագոյն քաղաքը հանդիսացող Թրիփոլի մէջ արդէն իսկ արիւնահեղութիւն տեղի ունեցած է, որու հետեւանքով մարդ գոհուած է: Պատճառը, ըստ Սեպուհ Գալիփեանի, նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանութեան գործը քննող ՄԱԿ-ի դատարանի յառաջիկայ օրերուն սպա-

Շաբ.ը էջ 4

# ՍԱՐԳՍԵԱՆԻ «ՖՈՒՏԲՈԼՆ» ՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱՄԱԶԸ

## ԱՆԴՐԱՆԻԿԹԵՒԱՆՆԵՐ

Սերժ Սարգսեանի «Ֆուտբոլային» դիւանագիտութիւնը հերթական «ձեռքբերումն» ունեցաւ: Թուրք ազգայնականները, ոչխարների հոտի պէս իրար կոխկրտելով, լցուեցին Անիի Մայր տաճար եւ ամբողջ աշխարհի աչքի առաջ սկսեցին նամագ անել: Սա ուղղակի հետեւանք է վերջին երկու տարում առկայ այն դիւանագիտական խաղերի, որը Սարգսեանի մտքի «թուիչքն» էր: Մինչեւ այդ տիրահաշակ «ֆուտբոլը»՝ թուրքերը նման բան չէին անի, որովհետեւ մտահոգուած էին, իրենց իսկ որակմամբ, «հայկական ցունամիով», այն է՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի դէմն առնելով, ու ստիպուած էին միջազգային հարթակներում քաղաքակրթութիւն բեմադրել: Թուրքական իշխանութիւններն այդ ընթացքում կուռ-կուռի ձագ էին դարձել ու արեւելեան ոճով քծնում էին հայկական կողմին ու ձեւեր փնտռում երկխօսութեան համար:

Նկատենք, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, բացի քաղաքական լուծման սպասող երկարաժամկէտ խնդիր լինելուց, նպաստում էր նաեւ հայ-թուրքական եւ հայ-ազրբեջանական խնդիրների տարանջատմանը, ինչը ձեռնառու էր մեզ եւ շատ կարեւոր գործոն՝ ՀՀ անվտանգութեան ապահովման համար: Թուրքերը, գոնէ առերեւոյթ, մոռացել էին Ղարաբաղի մասին ու մտահոգուած էին լոկ իրենց խնդիրներով, բայց Ս. Սարգսեանն ամէն ինչ գլխիվայր շուռ տուեց:

Այդ ե՞րբ էր թուրքիան այսքան ներգրաւուել դարաբաղեան գործընթացի մէջ ու ե՞րբ էին նրանց հետ աշխարհի խոշոր կենտրոնների դեկավարները Ղարաբաղի հարց քննարկել: 1994-ի գինադադարից մինչեւ տիրահաշակ «ֆուտբոլային» դիւանագիտութիւնն այդպիսի բան չէր եղել: Իսկ հիմա, երբ պաշտօնական Երեւանը շանս տուեց թուրքերին Յեղասպանութեան ճանաչման հարցը միջազգային քաղաքական օրակարգային հարցի մակարդակից իջեցնել երկու հարեւան երկրների միջեւ գոյութիւն ունեցող վիճելի հարցի մակարդակ, ինչպէս նաեւ Ղարաբաղի մասով դառնալ օժանդակող կողմ, նրանք լիտիացել են, եւ արդէն անարգում են մեր հոգեւորն ու մշակութայինը:

Սերժ Սարգսեանի «նախաձեռնողականութիւնը», որն իրականում անողնաշար, անարժանապատիւ ու անհաշուարկ քաղաքականութեան հոմանիշն է դարձել, բացի կորուստներից ու նուստացումներից ուրիշ ոչինչ չտուեց մեզ:

«Չար» էրդողանը եւ «բարի» Գիւլը հիմա այնպիսի «օյիններ» են բերում Սարգսեանի (ըստ էութեան՝ Հայաստանի) գլխին, որ նոյնիսկ «ի պաշտօնէ» իշխանութեանը քծնողներն են ստիպուած ընդունում, որ սխալուել են թուրքիայի հարցում:

Տեսէ՛ք. թուրքերը մի կողմից պատարագ են թոյլատրում, բայց խաչն այդ օրը չեն տեղադրում Աղջնամարի գագաթին, իսկ յետոյ խաչը տեղադրում են, բայց հոտին ուղարկում են Անի՝ նամագ անելու:

Ահա այդպէս են նրանք վարում մուրացկանային արտաքին քաղաքականութիւն որդեգրած պետութեան ու այդ պետութեան ժողովրդի արժէքների հետ, սակայն նրանցից այլ բան սպասել չէր կարելի: Եթէ Սերժ Սարգսեանը անհասկանալի բերկրանք էր ապրում մերոնց կերած գոլից յետոյ, իսկ դիւանագիտական ասպարէզում թուրքերին անընդհատ ու ինքնամոռաց «այո» ասում, ապա նոյնիսկ մեղմ արտաքին քաղաքական գծի կողմնակիցների համբաւ ունեցող Գիւլ-էրդողան գոյզը բազմացաւ, եւ արդիւնքները մենք տեսնում ենք. մուրացկանին նուստացնում են մինչեւ վերջ:

Իշխանութիւններին այսքանից յետոյ այլ բան չի մնում, քան յետին թիւով «հայրենասիրութիւն» խաղալն ու յոխորտալը: Նախագահական նստավայրում հիմա «մոռացել» են, որ անցեալ տարուայ այս օրերին եթերը ողողել էին «Ես կը մեկնեմ թուրքիա, եթէ լինեն բաց սահմաններ կամ մենք լինենք բացման նախաշեմին» կարգախօսով: Մեկնելը մեկնեցին, սակայն բաց սահմանի փոխարէն ստացան այս տարուայ Սեպտեմբերին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատարագին մասնակցել-չմասնակցելու հարցի քննարկում: Ընդամէնը:

«Ազատ, բայց պատասխանատու» հեռուստաընկերութիւններին այժմ արտօնուած է տարբեր տեսանկիւններից ներկայացնել հայերիս այնտեղ գտնուելու եւ չգտնուելու առաւելութիւններն ու թեթեւութիւնները: Պալատական «վերլուծաբանները», արտահաստիքային քծնողներն ու յաճախորդացման ճանապարհ բռնած նորելուկ «մասնագէտները» մի քանի «ուկուրսով» քննում ու վերլուծում են թուրքերի պահուածքը՝ մոռանալով, որ մէկ տարի առաջ հայ հանրութեանը քարոզում էին, թէ միայն թուրքով կայ մեզ փրկութիւն ու Սարգսեանի «իմաստուն» քայլերի արդիւնքում բացուելու են սահմաններն ու մենք սկսելու ենք երջանիկ ապրել, իսկ Տէր-Պետրոսեանն էլ նախանձից «պաշտելու» է: Էդ հիմա է, որ նոյն մարդիկ սկսել են «թուրքը մնում է թուրք» բառապաշարին անցնել՝ ընկնելով միւս ծայրայեղութեան գիրկը. սրիկաների վերջին հանգրուանը «հայրենասիրութիւնն» է:

Եւ այսպէս, հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրման տարելիցի նախաշեմին մենք ունենք չբացուած սահմաններ, չհաստատուած դիւանագիտական յարաբերութիւններ, է՛լ աւելի լարուած վիճակ թուրքիայի հետ, քան «ֆուտբոլից» առաջ էր, նուստացած հայ ժողովուրդը, Հայաստան-Սփիւռք, իսկ աւելի ճիշդ՝ ՀՀ իշխանութիւնների եւ Սփիւռքի միջեւ գոյացած անդունդ, նամագ Անիի Մայր տաճարում, ՀՀ արտգործնախարարի փորձութեան ենթարկուած այտեր եւ Բուրսայում կացացած թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպման ժամանակ Սերժ Սարգսեանի անբնական հրճուանք: Սա՛ է «ֆուտբոլի» հաշուեկշիռը:

Հետաքրքիր է, թէ ի՞նչ են ասելու ՀՀ իշխանութիւնները եւ նրանց կից սպանդարները, երբ

Շարք էջ 4

# ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՒ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՄԻՋԵՒ

## ՆԱԽՐԱՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան շուրջ զարգացումները մի շարք հարցեր են առաջացրել: Գլխաւորը, թերեւս, Սերժ Սարգսեանի եւ Գագիկ Մառուկեանի յարաբերութիւնների վատթարացման պատճառն է: Դատելով կուսակցութեան գործունէութիւնից, Մառուկեանը չի միջամտում քաղաքական գործընթացներին, չի քննադատում Սարգսեանի արտաքին քաղաքականութիւնը, կտրուկ յայտարարութիւններ չի անում հայ-թուրքական յարաբերութեան, Ռուսաստանի հետ համագործակցութեան եւ դարաբաղեան կարգաւորման հարցերով: Այսինքն, հիմնական հարցերի շուրջ ՀՀ եւ ԲՀ միջեւ առանձնապէս տարածայնութիւն չկայ: Այդ դէպքում, ո՞րն է պատճառը:

Պատասխանը, թերեւս, պէտք է որոնել անձնական հարթութիւնում: Չնայած ըստ փորձագէտների Մառուկեանը իբր տատանուած է իշխանութեան ու ընդդիմութեան միջեւ, իրականում նա ոչ մի կերպ չի կարողանում ընտրութիւն անել Սերժ Սարգսեանի ու Ռոբերտ Քոչարեանի միջեւ:

Բանն այն է, որ Բարգաւաճ Հայաստանը չէր ստեղծուի առանց նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանի: Եւ թէեւ վերջինս առայժմ չի յայտարարել կուսակցութեան ստեղծման հարցում իր վաստակի մասին, նրա ստուերը մշտապէս թեւածում է օդում: Եւ չի բացառում, որ նախընտրական արշաւի նախօրէին, ասենք 2011 թ. գարնանը, տեղի ունենայ ԲՀ համագումարը, որին ներկայ լինի Քոչարեանը եւ վարչութեան նախագահ դառնայ ասենք Վարդան Օսկանեանը: Դա ներկայումս ապաքաղաքական կուսակցութիւնը, որ ներկայումս դեկավարում է քաղաքականութեան հետ կապ չունեցող մարդը, կը վերածի ազդեցիկ քաղաքական ուժի՝ գանգուածեղ բազային՝ մարդկային ու նիւթական, կ'աւելանայ քաղաքական գործիչների հեղինակութիւնը:

Չի բացառում, որ ԲՀ-ն կը միանայ ՀՅԴ-ին, որն «անտարբեր չէ» Քոչարեանի հանդէպ: Այս հնարաւորութիւնը թուում է ակնյայտ ՀՅԴ դեկավարների յայտարարութիւններից յետոյ, ըստ որի ՀՅԴ միանշանակ չի համագործակցելու Հայ Ազգային կոնգրէսի հետ: Իսկ ՀՅԴ պատգամաւոր Արծուիկ Մինասեանն էլ քննադատել էր ՀՀ-ին, համարելով, որ այն չի կարող երկիր դեկավարել: Յատկանշական է նաեւ ՀՅԴ յայտարարութիւնը նոր իշխանութիւն ձեւաւորելու մտադրութեան մասին: Եթէ նոր իշխանութիւնը ոչ Սարգսեանն է, ոչ էլ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ապա ո՞վ: Թերեւս, նկատի է առնուում Քոչարեանը:

Այս իրավիճակը գլխացաւանք է թէ Մառուկեանի, թէ Սարգսեանի համար: ԲՀ առաջնորդը, ով Քոչարեանի շնորհիւ տէր է դարձել ահռելի կարողութեան, սակայն դա պահպանում է շնորհիւ Սարգսեանի, նախկին նախագահից պէտք է լուրջ երաշխիքներ ստանայ առ այն, որ նա չաղթելու է Սարգսեանի հետ պայքարում, եւ եթէ հրաժարուի Սարգսեանի հետ «բարեկամութիւնից», չի կորցնի իր դիրքն ու կարողութիւնը:

Երաշխիք, բնականաբար, ոչ թէ ազնիւ խօսքի ձեւով, այլ, ասենք, Ռուսաստանից: Բայց քանի որ ներ-

կայում Ռուսաստանում խառնաշփոթ է՝ Մեդվեդեւն ու Պուտինը չեն կարողանում որոշել, թէ ով է առաջադրուելու նախագահի յաջորդ ընտրութեանը, ապա Մոսկուայի երաշխիքներն էլ չեն օգնի: Մնում է քաղաքական բանալի ուսկը: Մառուկեանը դիտէ, թէ ինչի է հանգեցնում նման ուսկը, Խաչատուր Սուքիասեանի օրինակով: Եւ այդ պատճառով էլ չի կարողանում ընտրել՝ ում կողմն անցնել վերջնականապէս:

Թերեւս, դրա հետ են կապուած ԲՀ ներքին պառակտման սպասումները, որի մասին խօսել է Արամ Սաֆարեանը: Ըստ ամենայնի, կուսակցութեան մէջ տեղի է ունենում այսպէս ասած քոչարեանական եւ իշխանական թեւերի բանավէճ: Թէ ինչ «չափաբաժնով»՝ դժուար է ասել, սակայն հանգամանքը, որ Գագիկ Մառուկեանը ազատեց Աժ քոչարեանամէտ փոխնախագահ Արեւիկ Պետրոսեանին, վկայում է, որ ինքը Մառուկեանը առայժմ հակուած է դէպի Սարգսեանը: Երեւում է, նա Քոչարեանից երաշխիքներ չի ստացել:

Սերժ Սարգսեանի համար նոյնպէս պահը լաւը չէ: Եթէ հայ Ազգային կոնգրէսն ու Տէր-Պետրոսեանը յաւակնում են խորհրդարանի ընդդիմադիր նիշային եւ բաւարարում են ոչինչ չնշանակող 25 տոկոսով, ապա Քոչարեանը ակնյայտօրէն ձգտում է իշխանական նիշային: Իսկ այդտեղ Սարգսեանն ու Քոչարեանը միասին չեն տեղաւոր-

Շարք էջ 3

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԻԷ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
 Յեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797- 6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ Է ԵՆԹԱՐԿՈՒՄ 2011-Ի ԲԻԶՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Քաղաքական ուժերը սկսել են քննարկել անցած շաբաթ կառավարության կողմից հաստատուած 2011 թուականի բիզնեսի նախագիծը: Ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները խստօրեն քննադատում են փաստաթուղթը:

Նախագծով 2011 թուականի պետբիզնեսի առաջարկում է հաստատել եկամուտների գծով՝ 850 միլիարդ, ծախսերի գծով՝ գրեթե 999 միլիարդ դրամ: Բիզնեսի դեֆիցիտը կը կազմի 148.6 մլրդ դրամ: Հաշուարկների հիմքում կառավարությունը դրել է 4,6% տնտեսական աճը:

Համեմատութեան համար՝ այս տարուայ պետբիզնեսի եկամտային մասը 742, ծախսային մասը՝ 935.5 միլիարդ է, պակասուրդը՝ 193 միլիարդ դրամ:

Վարչապետ Տիրապետյանը անցած շաբաթավերջին յայտարարեց, թէ բիզնեսի նախագիծը համակողմանիօրէն քննարկուել է տարբեր ատենաներում, այն համահունչ է կառավարութեան որդեգրած տնտեսական քաղաքականութեանը: Քննարկման արդիւնքներն ամփոփուել են Սերժ Սարգսեանի մօտ, որի առաջարկութեամբ 10 միլիարդ դրամով աւելացուել է բիզնեսի նախագծի ծախսային մասը:

Հայ ազգային կոնգրէսի տնտեսական յանձնախմբի անդամ, Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Խաչատրեանի գնահատմամբ, 2011 թուականի բիզնեսի նախագիծը ոչ մի դէպքում վերջ-

նական կայունացման կամ ճնշածամից դուրս գալու բիզնեսի անուանել չի կարելի, սա, աւելի շուտ, «նահանջի, հետընթացի բիզնէ է»:

Պատճառն այն է, որ վարկային միջոցներ ներգրաւելու հնարաւորութիւնները, որ կառավարութիւնը ունէր 2009 թուականին, այս տարի չկան, եւ կառավարութիւնը հասկանում է, որ «ստանձնած սոցիալական պարտաւորութիւնների շրջանակներում բիզնէն աւելի փոքր լինել պարզապէս չի կարող»:

«Այս համակարգը իրեն սպառել է: Այս համակարգը վերջնականապէս ապացուցեց, որ իր բոլոր ռեսուրսները արդէն օգտագործուել են: Մի ձեւ կայ միայն առաջընթացի՝ որ համակարգը փոխուի, դա նշանակում է կոռուպցիայի վերացում, մենաշնորհի վերացում, օլիգարխիի տնտեսութեան վերացում», - ասաց Խաչատրեանը:

«Ես չեմ տեսնում փաստաթուղթ, որտեղ կայ կոնկրետ ծրագիր, որը կ'ապահովի կոնկրետ արդիւնաւէտութեան բարձրացում, աշխատանքի արտադրողականութիւն եւ այլն, եւ այլն: Ես տեսնում եմ փաստաթուղթ, որը փորձում է կրկնել այսօրուանը, բայց աւելի վատ կրկնութիւն կը լինի: Որեւէ աճ չի ապահովուելու: Նոյնիսկ այն համեստ աճը, որ կայ համախառն ներքին արդիւնքի վերաբերեալ, դա էլ է շատ կասկածելի», - եզրափակեց Վահագն Խաչատրեանը:

ՄԱՅՈՒՄՆ ԵՆՈՐ ԴԵՊԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հայաստանի գինուած ուժերում արձանագրուել է մահուան եւս մէկ դէպք: Կիրակի օրը ժամը 19:00-ի սահմաններում N գործարարի գործարարի նկուղում յայտնաբերուել է նոյն գործարարի ժամկէտային գինծառայող, շարքային Սամուէլի Խաչատրեանի դին՝ կախուած վիճակում:

Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի խորհրդական, նախարարին աւելցրել հասարակական խորհրդի նախագահ Գեղամ Յարութիւնեանը ռադիոկայանին փոխանցեց, որ անմիջապէս դէպքի վայր է ուղարկուել յանձնախումբ՝ ծառայողական քննութիւն անցկացնելու համար:

Հարցին, թէ ինչու՞ է բացատրում յանձնարարի դարձած նման դէպքերը, Գեղամ Յարութիւնեանը արձագանքեց. - «Դժուար է ասել, որովհետեւ իւրաքանչիւր դէպք իր առանձնապատկերներն ունի: Կոնկրետ այս դէպքն էլ՝

պէտք է սպասենք հանգամանքների ճշգրտմանը՝ ինչի՞ հետ է կապուած այդ արարքը, ինչ է ընկած հիմքում»:

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ իրենց անցկացրած ուսումնասիրութիւնների արդիւնքում, միայն անցած 3 ամիսների ընթացքում Զինուած ուժերում 13 գինծառայող է գոհուել:

«Սա, իհարկէ, բանակում անկառավարելիութեան վիճակի մասին է խօսում, եւ բարձրագոյն հրամանատարական կազմի ոչ իր տեղում գտնուելը», - ասաց նա:

Իրաւապաշտպանի համոզմամբ, Ազգային ժողովի համապատասխան յանձնաժողովը պէտք է հրատապ կերպով լուծման կազմակերպի եւ Պաշտպանութիւն նախարարութիւնից հաշուետուութիւն պահանջի բանակում կատարուող դէպքերի վերաբերեալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 73 ՏՈԿՈՍԸ ԿՐՕՆԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է ԿԵԱՆՔԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՂԿԱՑՈՒՅԻՉ

Gallup գործակալութիւնը հրապարակել է աշխարհի 114 երկրներում իրականացրած հետազօտութիւնների արդիւնքները՝ կրօնապաշտութեան մակար-դակի մասին: Մեծահասակների միջին բաժինը, որ պնդում է, թէ կրօնն իր կեանքի կարեւոր բաղկացուցիչն է, կազմում է 84 տոկոս: Սոցիոլոգների կարծիքով, կրօնապաշտութեան վրայ ուղղակի-օրէն ազդում է մարդկանց կենսամակարդակը: Որքան մարդիկ աղքատ են, այնքան կրօնասէր են: Հարցին՝ «Արդեօք կրօնը

կարեւոր դե՞ր ունի ձեր կեանքում», Հայաստանում դրական է պատասխանել 73 տոկոսը: Բացասական է պատասխանել հարցուածների 23 տոկոսը: Վրաստանում այդ թիւը համապատասխանաբար 81 եւ 16 տոկոս է, Արգենտինայում՝ 50 եւ 49 տոկոս, Թուրքիայում՝ 82 եւ 15, իսկ Ռուսաստանում կրօնասէր է բնակչութեան 34 տոկոսը: Ամենակրօնասէր երկրները, որտեղ 99 տոկոսը դրական են պատասխանել, Բանգլադէշը, Նիգերիան, Եմենը, Ինդոնէզիան են:

ԱՐԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԸ ԶԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ՍՏՆԵԼ ՀԱԿ

«2010թ. աշունը խիստ տարբերում է միւս աշուններից, որովհետեւ 2010թ. Սեպտեմբերից սկսուել է մի պրոցէս, որը դեռ Հայաստանում առերեւոյթ չի երեւում, բայց որը վերջիվերջոյ բերելու է բաւական լուրջ փոփոխութիւնների. կամ դրանք կը լինեն յեղափոխական ճանապարհով՝ սոցիալական բազայի վրայ, կամ դրանք կը լինեն տրանսֆորմացիայի ճանապարհով, ինչի մասին ասաց Աշոտ Մանուչարեանը, այսինքն՝ իշխանութիւնն ինքը կը փորձի որոշակի ձեւով փնտուել ելքեր ստեղծուած իրավիճակից», - մամուլի ասուլիսում ասաց «Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեանը:

Անդրադառնալով ներքաղաքական զարգացումներին՝ Արամ Կարապետեանը նշեց, որ այսօր դաշտն աւելի ընդդիմադիր է դառնում՝ յատկապէս հասարակական տրամադրութիւնների առումով: ՆժԿ առաջնորդը համոզուած է, որ փոփոխութիւնների հաննելու համար հարկաւոր է մի նոր բան, որը չի լինի կուսակցական, քանի որ, ըստ Կարապետեանի, այսօր իրականում շատ ընդդիմադիր մարդիկ կան, որոնք ոչ մի կուսակցութեան չեն յարում: Կարապետեանը չժխտեց նաեւ, որ իր կուսակցութիւնում եւս ոչ բոլորն են ընդդիմադիր:

Ինչ վերաբերում է ՆժԿ անելիքին, Արամ Կարապետեանը վստա-



«Նոր ժամանակներ» առաջնորդ Արամ Կարապետեան

հեցրեց, որ իրենք «չեն պատրաստուած ընդունուել ՀԱԿ», բայց բոլոր ընդդիմադիր ուժերի հետ պատրաստ են մասնակցել ընդդիմութեան գործողութիւններին: ՀԱԿ-ին չանդամագրուելու պատճառը, Կարապետեանի մեկնաբանութեամբ, այն է, որ իրենք ի սկզբանէ չեն կիսել ՀԱԿ-ի մօտեցումներն արտաքին քաղաքական հարցերում, սակայն համաձայն են եղել ներքաղաքական խնդիրներում նրանց սկզբունքներին:

Արտահերթ ընտրութիւնների անցկացման համար, ՆժԿ առաջնորդի խօսքով, այսօր կան օբիեկտիւ պատճառներ, սակայն չկան սուբիեկտիւ պայմաններ, որոնցից են, օրինակ, խարիզմատիկ առաջնորդը, քաղաքական պահ:

ԿՐԿԻՆ ԱՐԳԻԼՈՒԵԼ Է ՀԱՆՐԱՅԱԲԱՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանը արգելել է Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) ընդդիմադիր դաշինքին հանրահաւաք անցկացնել Ազատութեան հրապարակում:

Հոկտեմբերի 15-ի համապետական հանրահաւաքի համար քաղաքապետարանը առաջարկել է Մատենադարանին յարող տարածքը:

Այս անգամ Ազատութեան հրապարակում հանրահաւաքն արգելելու պատճառը այստեղ տեղադրուած կարուսէլներն ու ատրակցիոններն են:

Վկայակոչելով «ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքի 13-րդ յօդուածը՝ քաղաքապետարանը արձանագրում է, որ «երեխաների հանգիստն ու ժամանցն ապահովող միջոցառումը բացառում է միաժամանակ նոյն տարածքում հանրահաւաքի անցկացումը»:

ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեանը նման հիմնաւորումներով հանրահաւաքի արգելումը «ճղճիմ» որակեց:

«Ոչ մի պատահական բան չեմ տեսնում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում շարունակեց Կոնգրէսի համակարգողը. - «Այդտեղ շատ խորհրդանշանական իմաստ են դնում իշխանութիւնները: Մար-

տիմէկեան ջարդից յետոյ՝ Սերժ Սարգսեանի ինսուլտուրացիայի օրը ռազմական մի շքերթ անցկացրեցին, մի աբսուրդ: Դրանով ուզում էին ընդգծել բռնի գործողութիւնների յաղթանակը ժողովրդի նկատմամբ»:

Զուրաբեանի խօսքով, իրենք շարունակելու են Ազատութեան հրապարակի վերանուաճման գործընթացը. չնայած վերջին շաբաթներին այդտեղ հանրահաւաքների իրազեկման 10-ից աւելի դիմումներ են մերժուել, բայց իրենք շարունակելու են դիմել, մերժումները բողոքարկելու են դատական ու միջազգային ատենաներում. - «Կը հասունացնենք իրավիճակը, ցոյց կը տանք արդէն բոլորի համար պարզ ձեւով, որ սա իշխանութիւնների ապօրինի քինախնդրութիւնն է: Դրանից յետոյ, մենք արդէն որոշումը ունենք, կը նշանակենք օր եւ այդ օրը կը մտնենք Ազատութեան հրապարակ, ժողովուրդը կը մտնի Ազատութեան հրապարակ: Անցկացնելու ենք հանրահաւաք՝ անկախ նրանից, թէ որն է լինելու իրենց որոշումը»:

Ազատութեան հրապարակում ընդդիմութեանը հանրահաւաք անցկացնելու թոյլտուութիւն չի տրուել 2008 թուականի վարնանից ի վեր:

ՄԱՐԳՍԵԱՆԻ ՈՒ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՄԻՋԵՒ

Շաբաւաղաւած էջ 2-էն ուի: Այնպէս որ, Սարգսեանի հակառակորդը սուեալ իրավիճակում ոչ թէ Տէր-Պետրոսեանն է, այլ Քոչարեանը, եւ նա պէտք է ամէն ինչ անի, որ Քոչարեանը չզբաղեցնի այդ նիշան: Դրա համար Քոչարեանին պէտք է գրկել կուսակցական պատֆորմից:

Ահա թէ ինչու են ուժգնացել յարձակումները ԲՀԿ դէմ, որը կարող է դառնալ Քոչարեանի միակ պլատֆորմը: Ներկայում կուսակցութեան, աւելի ճիշդ քոչարեանամէկտ թեւի առջեւ խնդիր է դրուած չփլուզուել մինչեւ նրա յայտնուելը, ձգել ժամանակը, եւ առայժմ այդ խնդիրը կատարուել է:

# ԼՈՒՐԵՐ

## ՎՐԱՍԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ. «ԵՍ ՉԳԻՏԵՄ, ԹԵ ԻՆՉ Է ԶԱՒԱԽՔԸ»



Գրիգոր Վաչագանի Հայաստանի իր պաշտօնակցի՝ Էդուարդ Նալբանդյանի հետ համատեղ առաջին ժամանակ

«Ես չգիտեմ, թե ինչ է Զաւախքը, նման վայր վրաստանի քարտէզի վրայ չկայ», - յայտարարել է Վրաստանի ԱԳ նախարար Գրիգոր Վաչագանի՝ Հայաստանի իր պաշտօնակցի՝ Էդուարդ Նալբանդյանի հետ համատեղ առաջին ժամանակ:

Ինչ վերաբերում է հայկական դպրոցների խնդրին, Վաչագան հաստատեց, որ բացում են 103 դպրոցներ, դրանք կհաստատուեն համակարգիչներով, իսկ այդ դպրոցների ուսուցիչները պատրաստութիւն են անցել:

Խօսելով հայալեզու տարա-

ծաշրջանի խնդիրների մասին, Վաչագան նկատել է, որ դպրոցականները բազային կրթութիւն ստանալու են հայերէնով, իսկ բուհերի նախապատրաստական կուրսերում նախատեսուած է վրացերէնի խորացումը ուսուցում: «Դա անհրաժեշտ է, որ հայերն ու վրացիները հաւասար հնարաւորութիւններ ունենան», - ամփոփել է Վրաստանի ԱԳՆ ղեկավարը:

Նշենք, որ Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը Երեւան է ժամանել երկօրեայ պաշտօնական այցով:

## ՀԱՅ ԹԵՎՆԱԾՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ադրբեջանի իւրաքանչիւր ընտրող կարող է մասնակցել այդ երկրի ընտրութիւններին, լինի հայ, վրացի, ռուս, հրեայ կամ թուրք եւ այստեղ որեւէ գարմանալի բան չկայ: Այս մասին յայտարարել է Ադրբեջանի Կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Մազահիր Փանախովն, անդրադառնալով նրան, որ Ադրբեջանահայերի ասամբլիայի ղեկավար Գրիգորի Այվազեանը ցանկութիւն է յայտնել առաջադրել իր թեկնածութիւնը այդ երկրում Նոյեմբերի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններում:

«Մենք մի պայման ունենք. այդ մարդը պէտք է լինի Ադրբեջանի քաղաքացի: Ոչ մի խնդիր չկայ, որպէսզի Ադրբեջանի քաղաքացիներին հնարաւորութիւն տրուի երկրի տարածքում քուէարկել կամ իրենց թեկնածութիւնն առաջադրել», - ասել է Փանախովը:

Նշենք, որ ներկայումս Հա-



Գրիգորի Այվազեան  
Երեսնամեակը ապրող Ադրբեջանական ԽՍՀ քաղաքացի Գրիգորի Այվազեանը պաշտօնապէս յայտարարել է, որ ցանկանում է իր թեկնածութիւնն առաջադրել Ադրբեջանի խորհրդարանական ընտրութիւններում:

Բռնի տեղահանուած Այվազեանը համապատասխան նամակով դիմել է Ադրբեջանի ղեկավարութեանը:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԼԱՐՈՒԱԾ ՎԻՃԱԿ

Շարունակուած էջ 1-էն  
սուող որոշումն է:  
Յայտնենք որ, տարածուող լուրերու համաձայն, ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի քննիչները պատրաստ են ամբաստանագիր ներկայացնելու Շիի համայնքին պատկանող «Հըզպալլահ» կազմակերպութեան անդամներուն դէմ: «Հըզպալլահ» մերժելով սպանութեան հետ իր անդամներու առնչութիւնը կը պահանջէ վարչապետ Սաատ Հարիրիէն, որպէսզի կանխաձեռն յայտարարէ, թէ պիտի չընդունի նման անբաստանութիւն՝ իր հօր

սպանութեան հարցով: Վարչապետը սակայն, կը մերժէ նման կեցուածք որդեգրել ու կը յայտարարէ, որ ինք պիտի ընդունի Միջազգային դատարանի որոշումը եթէ ան ըլլայ հիմնաւորուած:  
Կասկածներ կան, որ «Հըզպալլահ» գիտեալ իր խմբաւորումները գործի դնելով կրնայ գրաւել երկիրը: Այս կացութեան առջեւ միւս համայնքները եւ յատկապէս Սոււնի համայնք անդամները սկսած են գիտուիլ, յիշեցնելով Լիբանանի քաղաքացիական պատերազմին նախորդող օրերը:

## ԵՒՐԱԽՈՐՀՈՒՐԴԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Եւրախորհրդի ժողովրդավարական կառույցների տնօրինութեան ղեկավար Ջիլդերիկ Շաֆֆելը - «Հայաստանի իշխանութիւնները սիրով համաձայնել են հիւրընկալել համաժողովը, սակայն ներգրաւուած չեն եղել մասնակիցների ընտրութեանը: Որոշումը կայացուել է բացառապէս Ստրասբուրգում»:

Համաժողովին չհրաւիրուելու առթիւ դժգոհութիւն հնչեցրած կազմակերպութիւններից մէկի՝ Հելսինքսի քաղաքացիական ասամբլիայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը օրերս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարել էր, թէ այդպիսով Եւրախորհուրդը ցոյց է տալիս, որ «քաղաքական նպատակայրմարութիւնը շատ աւելի է կարեւորում, քան ժողովրդավարական արժէքները»:

Այս կապակցութեամբ Եւրախորհրդի ժողովրդավարական կառույցների տնօրինութեան ղեկավարը ասաց. - «Յաւալի է, որ ֆորումը, որը կոչուած է քննարկել Եւրոպայում ժողովրդավարութեան առջեւ ծագած մարտահրաւէրները եւ այդ գործում Եւրախորհրդի դերը, արժանանում է նման մեկնաբանութեան»:

Ֆորումին չեն մասնակցելու նաեւ Գիւմրիի ժողովրդական «Ասպարէզ» ակումբը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակափոփոխութիւն կենտրոնը», «Շահաթիւն» կազմակերպութիւնը, որը միաւորում է յետընտրական զարգացումների առնչութեամբ դատապարտուած ընդդիմադիրների կանանց:

Եւրախորհրդի ժողովրդավարական կառույցների տնօրինութեան ղեկավարը ասաց, որ մենք ձգտում ենք ապահովել համաբնութային մասնակցութիւն: Ֆորումի 250 մասնակիցների մէկ քառորդը՝ մօտ 60-ը, լինելու են ԵՄ անդամ երկրներից քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ: Յատկանշանական է, որ Հայաստանից ֆորումին մասնակցելու են 16 հասարակական կազմակերպութիւններ, ինչը, մեր կարծիքով, ապահովում է Հայաստանի բաւական լուրջ եւ ներկայացուցչական մասնակցութիւնը այս ֆորումում», - պարզաբանեց Եւրախորհրդի ժողովրդավարական կառույցների տնօրինութեան ղեկավարը:

Եւրախորհրդի ժողովրդավարական կառույցների տնօրինութեան

## ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ

Շարունակուած էջ 1-էն  
- «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցի ընթացքին նման կարծիք յայտնեց Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագէտ Սերգէյ Մինասեան: Ան աւելցուց, որ այդ իրադարձութիւնները նաեւ պայմանաւորուած են Թուրքիոյ ներքին քաղաքական զարգացումներով:

«Փաստօրէն, ստեղծուել է ուշադրաւ մի վիճակ: Մի կողմից Թուրքիայի տարածքում գտնուող Ադրթամարի Սուրբ Խաչ եկեղեցում ի վերջոյ տեղադրուել է խաչը, միւս կողմից՝ Անիի Մայր տաճարում թուրք ազգայնականներն անցկացնում են նամագ, որն արտօնուած է Թուրքիայի կառավարութեան կողմից»:

Թուրքագէտ Արտակ Շաքարեանի կարծիքով սակայն, այս երկու իրադարձութիւններու միջեւ անմիջական կապ չկայ: Ան համոզ-

մունք յայտնեց, որ Անիի մէջ կազմակերպուած նամագի արարողութիւնը պէտք է դիտարկել բացառապէս յառաջիկային Թուրքիոյ մէջ տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններու ծիրէն ներս:

Ամփոփելով, Շաքարեան ըսաւ. - «Անիում նամագը գուտ ներքաղաքական պրոցէս է, իսկ Ադրթամարի խաչը աւելի ուղղուած է դէպի Եւրոպա, դէպի Հոկտեմբերին Եւրամիութեան առաջընթացի գեկոյց»:

Քաղաքագէտ Սերգէյ Մինասեանի կարծիքով, քաղաքական այս թոհուբոհի մէջ հայկական կողմը առնուազն մէկ հարցի մէջ շահող դուրս եկաւ. - «Համարեա թէ 100 տարուց չետոյ Ադրթամարի եկեղեցում կանգնեցուել է խաչը, դա միայն եւ միայն ողջունելի է այն իմաստով, որ վերականգնուել է հայկական եկեղեցին»:

## ՍԱՐԳՍԵԱՆԻ «ՖՈՒՏԲՈՒՆ» ՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱՄԱԶԸ

Շարունակուած էջ 2-էն  
Հոկտեմբերի 10-ին առիթ լինի խօսել հայ-թուրքական արձանագրութիւնների ստորագրման արդիւնքների մասին:

Թախանձագին խնդրանք Սարգսեանի քարոզաթիւմին՝ Ռազմիկ Զոհրաբեանին կամ նմանատիպ մէկին դէմ չտաք բազմաչարչար հայ հեռուստադիտողին: Չնայած ձեզ էլ կարելի է հասկանալ, ու

ձեք գործն էլ մի բան չի: Որտեղից գտնէք նորմալ մէկին, ով դէմքի լուրջ արտայայտութեամբ պատրաստ լինի գովերգել պարտութիւնը եւ քաղաքական բաղոյնը թիւնը: Բայց, ամէն դէպքում, գտէք «նիւ-ռազմիկոհրաբեաններ», որ գոնէ մի քիչ թարմութիւն մտնի իշխանութեան PR-ի մէջ: Ճիշդ է, դրանից բան չի փոխուելու, բայց դե հիմա...  
« 70Ր »

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԲ ԼՐԱԳՐՈՂԸ ՀԵԳՆՈՒՄ Է ԹՈՒՐԲ ԱՉԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻՆ. ՆԱՍԱԶ ԱՐԷՔ ԱԹԵՆՔՈՒՄ ԵՒ ԻՄ ՀԱՇՈՒԻՆ ՔԱՊԱՊ ԿԵՐԷՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

Թ ր ք ա կ ա ն Vatan թերթի լրագրող-վերլուծաբան Մուսթուֆա թոնբեքիջին խիստ քննադատութեան է ենթարկել թրքական «Ազգայնական Շարժում» կուսակցութեան ղեկավարին, ով իր համակիրներին հետ, ի նշան բողոքի, Աղթամարում իրականացրած պատարագի, նամազ էր արել հայկական Անիի Մայր տաճարում:



Այնուհետ ստացան թոյլտույթի ենթակառուցվածքները եւ մարդու նման տեղեկացրեցին բոլորին դրա մասին: Բոլորն էլ իրենց ծրագրերը կազմեցին ըստ դրա, եւ մենք էլ գնացինք պատարագին հետեւելու:

«Ոմանք հարցնում են, թէ Աղթամարի հայկական եկեղեցում իրականացուած պատարագին ներկայ գտնուած «լիբերալները» ինչո՞ւ չկային Անիի Ֆեթհիյէ մզկիթի (Անիի Մայր տաճար) նամազին: Նրանց եմ պատասխանում.

1. Տրապիզոնի յունական Սուլթան Կալուբուսի պատարագ իրականացնելու թույլտույթի չլինելու պատճառով էր դարձել 2009-ի Դեկտեմբերի 23-ին, այսինքն՝ 2010-ին տեղի ունեցած պատարագից 8 ամիս առաջ:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում տարին մէկ անգամ իրականացուելիք պատարագի թոյլտույթի չլինելու պատճառով 2010-ի Մարտի 25-ին, Սեպտեմբերի 19-ին իրականացուած պատարագից 7 ամիս առաջ:

Անիի Ֆեթհիյէ մզկիթում Բահալեյի անօրինական նամազի մասին տեղեկացաւ 2 օր առաջ: 12 ժամուկայ ընթացքում թոյլտույթի ստացան եւ յաջորդ օրը նամազ արեցին: Այդ շտապօրակայնութեան պատճառն էլ չհասկացայ: Օրերը վերջանում են: Նամազից 3 օր առաջ այդ մասին միայն Բահալեյին եւ իր բանդան գիտէր:

2. Անիի Ֆեթհիյէ մզկիթում նամազ անելու եւ Աղթամարի Ս. Խաչում պատարագ իրականացնելու միջեւ սարերի տարբերութիւն կայ:

Ֆեթհիյէ մզկիթը մասնատականների սրբավայրը չէ: Միթէ հայերը մզկիթից եկեղեցի վերածած մի վայրում են պատարագ իրականացրել: Այն հայկական եկեղեցի է: Հայերը 1000 տարի առաջ են կառուցել այն: Նրանք վերանորոգուած եկեղեցում ցանկացան պատարագ իրականացնել եւ 3 տարի սպասեցին դրա համար:

Մի բան էլ, դու երկրիդ ո՞ր մասում չես կարող նամազ անել: Անիի աւերակների Ֆեթհիյէ մզկիթի անունը մինչ այսօր քանի՞ մասնատական գիտէր: Ասեմ՝ զրօ:

3. Կամ, այդ երեխայական գործողութեանը ինչո՞ւ պիտի գնայի: Ինչո՞ւ Անի: Ինչո՞ւ հայկական քաղաքում: Ինչո՞ւ եկեղեցուց մզկիթի վերածած վայրում: Չնայած, Անիի ցուցատախտակներից ոչ մէկի վրայ «հայ» բառը գոյութիւն չունի, դա էլ առանձին թեմա է: Բայց, դէ Բահալեյի բանդան գիտէր, որ դրանք հայկական են:

Թուրք ազգայնականների արած նամազը, նոյնիսկ մի փոքր անկեղծութիւն չէր ներշնչում: Այն իրականացուեց ակն ընդ ական, ատամ ընդ ատաման տրամաբանութեամբ: Այն ատելութեան եւ վրէժի բոլոր էր տարածում:

Ի՞նչ կ'ասէք, եթէ Անիի հայկական եկեղեցու փոխարէն նամազ անէք, օրինակ, Աթէնքում մզկիթից յունական ժողովրդական արուեստի թանգարանի վերածուած վոլոփոգա մզկիթում: Կասէք, թույլտույթի ստացել ենք, գնացինք: Տեսէք, հա, այնտեղ մեծ ուրախութեամբ ձեր հետ կը գամ: Բոլորի համար էլ քապապ կը պատուիրեմ: Յունաստանի մաշրաքաղաքում նամազ կ'անենք, հայկական ռեստորանում քապապ կ'ուտենք ու դրանով հրաշալի պատասխան կը տանք նրանց:

Դէ, նամազ անելու թոյլտույթի համար դիմէք Աթէնքի քաղաքապետին, իրականացրէք այս նախագիծը: Կրկնում եմ.

ԽԱՉԻԿ (ՔՐԻՍ) ՇԱՀԻՆԵԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

Անցեալ Կիրակի Հոկտեմբերի 2ին, 2010, Փասատինայի «Robin's Woodfire BBQ and Grill» ճաշարանին մէջ, տեղի ունեցաւ ընդունելութիւն-հաւաք մը, որու ընթացքին յայտարարուեցաւ Խաչիկ (Քրիս) Շահինեանի ընտրական մեկնարկը, որպէս Փասատինայի քաղաքապետական Խորհուրդի անդամութեան թեկնածու (4րդ ընտրաշրջանէն):



Սոյն ընդունելութեան հովանաւորներն էին ծանօթ գործարարներ Ռոպին Սալզըր եւ Ռաֆի ու Սոնա Պոզողլանեաններ: Հանդիպման ներկայ էին շրջանի հայկական քաղաքական, կրօնական եւ մշակութային տարբեր կազմակերպութեանց անդամներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Այս առթիւ խօսք առին Ռոպին Սալզըր եւ Մանօ Ակիւլեան: Երկուքն ալ դրուատեցին քաղաքացիական թեկնածու Խաչիկ Շահինեանի նկարագրային յատկանիշները, ծառայատիրութիւնը, ջանասիրութիւնը, համայնքի գերազուց շահերու հետապնդման համար ունեցած նուիրուածութիւնն ու սէրը:

Վերջաւորութեան խօսք առաւ Խաչիկ Շահինեան: Նախ շնորհակալութիւն յայտնեց ներկայ հասարակութեան եւ ապա յարեց. «Ես որոշեցի այս ընտրութեան մասնակցել, որովհետեւ վստահ եմ որ կարող եմ ապահովել այնպիսի առաջնորդութիւն, ղեկավարութիւն եւ տեսիլք, որոս իմ շրջանս արժանի է ունենալու: Այսինքն Փասատինայի ժողովուրդի շահերը միշտ առաջ նկատի ունենալ»:

Արդարեւ, աւելի քան 15 տարիներէ ի վեր, Փասատինայի քա-

ղաքապետական խորհուրդէն ներս կը բացակայէր տեղւոյն հայութիւնը ներկայացնող պաշտօնակատար մը: Ներկայիս կարիքը կայ նման անձի մը, քանի որ քաղաքի հայ բնակչութիւնը հետզհետէ աճ մը կ'արձանագրէ եւ բացը խիստ զգալի է: Արդարեւ ճիշդ ատենին կը ներկայանայ յարմարագոյն թեկնածուն՝ յանձնա բազմաթիւ արժանիքներով օժտուած, պատուական հայորդի՝ Խաչիկ (Քրիս) Շահինեանի: Ան հիմնադիրն է «Հայ Ինքնութեան բերք» կազմակերպութեան եւ քան տարիներէ ի վեր կը բնակի Փասատինայի մէջ: Գործատէր է եւ թէ հայ զաղուծի եւ թէ ամերիկեան տարբեր կազմակերպութիւններուն մէջ վարած է պատասխանատու պաշտօններ: Խաչիկ Շահինեան թէ ընկերային եւ թէ ամերիկեան քաղաքական շրջանակներուն մօտ իր բերած օգտաշատ ծառայութիւններուն համար գնահատագրեր ստացած է գոնկրէսական Ատամ Շիֆէն, կառավարիչ Առնոլտ Շուարցնեկըրէն, Փասատինայի քաղաքապետ Պիլ Պոկարտէն եւ ուրիշներէ: Ամուսնացած է եւ ունի երեք զաւակներ:

Բարի երթ խոստմնալից եւ համակրելի հայորդիին:

քապապները իմ կողմից: Մի անհանգստացէք, խոզի մսով չեմ կերակրի, այլ՝ գառի եւ տաւարի մսով»,-իր հրապարակման մէջ հեզնել է Մուսթուֆա թոնբեքիջին: Նշենք, որ այս հրապարակու-

massispost.com daily news updates

Advertisement for A.B.A. Insurance Services featuring Bedros S. Maronian and Siamanto B. Maronian. Includes contact information, service locations, and a list of insurance products like Life, Health, and Estate Planning. Also features a cartoon illustration of a man in a suit.

# ԱՆՐԵՏԱՑՈՂՈՂ ԴԵՄՔԵՐ

## ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՌՈՒԲԷՆ ՏԻՐԱՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ

### ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Կրթական, ազգային-քաղաքական եւ մշակութային բեղուն վաստակ մը ձգած իր ետին, յառաջացած տարիքին մէջ հրաժեշտ տուաւ կեանքին հալչպահայ գաղութի տիրական դէմքերէն հանդիսացած Ռուբէն Տիրարեան, որուն անունը անքակտելիօրէն կապուած կը մնայ Կիլիկեան ձեմարանի պատմութեան հետ, ուր գործեց ան որպէս ուսուցիչ եւ տնօրէն:

Կանուխէն ընդգրկած էր ուսուցչական ասպարէզը Հալչպի միսիոն Լալիք Լիսէն աւարտելէ անմիջապէս ետք, որպէս ուսուցիչ պաշտօնի կոչուելով Կիլիկեանէն ներս: Այնուհետեւ իր կեանքը նոյնացած է Կիլիկեանի հետ, հալչպահայ գաղութի այն հնագոյն վարժարանին հետ, որ եղած է դարբնոցը քանի-քանի սերունդներու ազգային-հայրենասիրական եւ գաղափարական կազմաւորման, հայակերտ դաստիարակութեան: Կիլիկեանի հասցուցած սերունդներուն մէջ, որոնց մէջ ազգային գործիչներ, ղեկավարներ եւ մտաւորականներ գործած են Հալչպի թէ հայ Սփիւռքի մէջ, Ռուբէն Տիրարեանի որպէս մտաւորական դաստիարակ եւ գաղափարապաշտ տնօրէն ազդեցութեան դրոշմը կրած են: Իր մէջ դաստիարակ տնօրէնի կոչումը նոյնացած էր հասարակական մարդու եւ ղեկավարի կոչումին հետ: Թրծուելով Ս.Դ.Հ.Կ.ի շարքերուն մէջ, սորվելով երէց սերունդի ղեկավարներու գործունէութենէն եւ գործակցութենէն հասած էր ղեկավար զիրքերու արժեքներով իր այդ հանգամանքը միջկուսակցական ժողովներու թէ ազգային-հայրենասիրական ճակատի առաջնորդութեան մէջ: Ղեկավարի եւ բեմբասացի կարողութիւնները զինք յարգելի դէմք դարձուցած էին գնահատուելով տարբեր շրջանակներէ: Իր ազգային-կրթական ծառայութիւններուն մէջ հալչպահայ գաղութը երախտագիտութեամբ կը յիշէ իր անունն ու առաջնակարգ ղեկավարութիւնը սուրիական իշխանութիւններու կրթական նոր քաղաքականութեան մէջ հայ դպրոցներու վերաբերող աննպաստ յօդուածները բարեփոխել տալու համահայկական ճիգերու եւ նախաձեռնութիւններու ընթացքին, որուն բարիքները մինչեւ օրս կը վայելեն սուրիահայ կրթական օժանդակները:

Իր հասարակական եւ հայրենասիրական գործունէութեամբ, կրթականին առընթեր, սուրիական իշխանութիւններու մօտ եւս վարկ կը վայելէր: Վայելած վարկին շօշափելի գնահատական արտայայտութիւնն էր, երբ 1970-ին նախագահ Հաֆէզ Ասատի Բարենորոգչական շարժումին յաջորդած խորհրդարանական անդամներուն նշանակումի ընթացքին նախագահական հրամանագրով նշանակուած երկու հայ երեսփոխաններէն մէկը Ռուբէն Տիրարեանը

եղաւ մեթր Գրիգոր Էպիլոգաթեանի հետ: Գնահատանքը իր անձին մէջէն ուղղուած էր իր կուսակցութեան՝ Ս.Դ.Հ.Կ.-ին, որ Սուրիոյ հետ յառաջդիմական անսպառ քննարկող յառաջապահ կազմակերպութիւն էր, արաբ եւ հայ ժողովուրդներու բարեկամութեան հաւատացող անխախտ հաւատարմութեամբ:

Ռուբէն Տիրարեան որպէս քաղաքական գործիչ սուրիական խորհրդարանէն ներս արդարացուց իր պետական հայ երեսփոխանի ներկայութիւնը մէկ կողմէ մշակուող նոր սահմանադրութեան աշխատանքներուն գործնապէս աջակցելով, միւս կողմէ հայ համայնքի իրաւունքներու հետապնդումը մնայուն սեւեռակէտ պահելով: Այս շրջագիծէն ներս հայ մարզական միութիւններու միացման քաղաքականութեան մէջ եւս իր օգտակար եւ շինիչ դերը ունեցաւ: Մաս կազմելով սուրիական խորհրդարանի կրթական յանձնախումբին իր փորձառական ներդրումը կատարեց կրթական ծրագիրներու մշակման:

Ռուբէն Տիրարեան հալչպահայ գաղութի գործօն ղեկավարներէն ըլլալով յարգուած հեղինակութիւն էր ազգային շրջանակներէն ներս: Այս բերումով ալ ազգային համերաշխական եւ հանդուրժողական մթնոլորտին ընձեռած պայմաններուն շնորհիւ ընտրուեցաւ հալչպահայ Գաւառական ժողովի անդամ, այլ խօսքով Ազգային երեսփոխան: Երեսփոխանական ժողովին անդամներուն մեծամասնութիւնը միագոյն էր: Ինք գիտակցելով հանդերձ այս իրողութեան պարկեշտ ժողովականի կեցուածքով ինքզինքին վերապահեց ընդդիմադիրի եւ ընդդիմախօսի դերը: Ըլլալով ժողովի ազգային ընդհանրական որոշումներուն հետ հակաճառեց այն բոլոր երեւոյթներուն դէմ, որոնք հատուածական միակողմանի ուղղութիւն կու տային ժողովական կեանքին...: Եթէ իր դիրքորոշումներուն դրոշմը անձնական էր, սակայն անտէք կը մեկնէին իր կուսակցութեան համազգային կողմնորոշումներէն...: Հայ կեանքի ազգային ժողովրդավարական բազմաձայն եւ առողջ կշռոյթին համար միշտ ալ անհրաժեշտ է ազգային ամբողջականութեան ներկայացուցչական մասնակցութիւնը: Ազգային իշխանութեան կառուցներէն ներս...:

Նոյն ընդհանրական եւ համազգային մտածողութենէ կը մեկնէր Հայ Դատի հանդէպ իր կեցուածքը, որուն բանաձեւումը կը գտնենք հետեւեալ մտածումներուն մէջ արտայայտուած Մեծ Եղեռնի 80-ամեակին առիթով. «Սփիւռքի մէջ կազմուի Հայկական Դատի Հետապնդման Կեդրոնական Յանձնաժողով, անխտիր բոլոր կուսակցութիւններու եւ այլազան կազմակերպութիւններու մասնակցութեամբ: Յանձնաժողով մը, որ ունենայ մնա-



յուն բնոյթ եւ հայրենի կառավարութեան հետ գործակցաբար Սփիւռքի մէջ հետապնդէ Հայկական Դատը, աշխարհի մեծ պետութիւններուն եւ Միջազգային ժողովներուն ընդունիլ տալ Հայոց Յեղասպանութիւնը եւ նիւթական եւ հողային հատուցում պահանջէ մինչեւ հիմա անպատիժ մնացած թուրքիսէն»:

Իրն էր կրթական ղեկավարի նախաձեռնութեան ոգին ու կարողութիւնը եւ տեսիլքի մը կառուած մնալով զայն իրականացնելու կամքը: Այս ծիրէն ներս Կիլիկեանի պատմութեան կարգ մը իրագործումները կապուած են Ռուբէն Տիրարեանի անունին: Իբր նախկին Տիրարեանի հիմնադրութենէն ասդին իր կրթական առաքելութիւնը կատարելով հունձքեր տալէ ետք, իր ջանքերով եւ ինստակալ անձնակազմներուն անձնուէր աշակցութեամբ նախկին Տիրարեան բարձրացաւ ձեմարանի մակարդակին, որ քայլ պահելով պետական ծրագրին հետ պատուաբեր յաջողութիւններ արձանագրեց Կիլիկեանը, իր օրով եւ իրմէ վերջ: Կիլիկեանը տիպար մանկապարտէզով օժտելու գաղափարը իր մանկավարժականի երազը եղած է: Այդ, երազը իրականացաւ եւս Մայք Նազարէթեանի նուիրատուութեամբ մանկապարտէզի շէնքին սեփականացումով եւ անոր տրուած արդիական բովանդակութեամբ: Մանկավարժական հիմունքներով «Մայք Նազարէթեան Արդիական Մանկապարտէզը» կը շարունակէ իր գրաւչութիւնը պահել:

Ռուբէն Տիրարեանի մանկավարժական փորձառութեան կարեւոր նպատակ բերաւ մանակցութիւնը Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախաձեռնութեամբ հայ տնօրէններու յատուկ Սեւրի (Փարիզ) «Մանկավարժական Ուսմանց Միջազգային Կեդրոնի ամառնային դասընթացներուն»:

Ընդունելով, որ հայկական մանկապարտէզը հիմքն է հայցի դաստիարակութեան ձեռնարկած է մանկապարտէզներու յատուկ դասագիրքերու պատրաստութեան «Նոր Այբբենարան» շարքով եւ «Մանկական Թուաբանութիւնը» 2 հատոր դա-

սագիրքերով: Երկար տարիներ անտէք Հալչպի եւ Պէյրութի մանկապարտէզներուն մէջ գործածուեցան պահանջ մը գոհացնող մեթոտաբանութեամբ:

Ռուբէն Տիրարեան հաւատալով, որ հայ ուսուցիչը պէտք է ոչ միայն արժեւորէ իր ներկայութիւնը հայ կեանքէն ներս, այլեւ՝ յարգել տայ իր ասպարէզային իրաւունքները, քանի մը իրեն պէս հաւատաւոր ուսուցիչներու հետ կը հիմնէ Հալչպահայ Ուսուցչական Միութիւնը: Միութիւնը կ'ունենայ իր «Բուրաստան» մանկապատանեկան պարբերաթերթը: Ռուբէն Տիրարեան ոչ միայն պարբերաթերթի խմբագիրներէն կը դառնայ, այլեւ՝ մանկապատանեկան գրականութիւնը յուզող յօդուածներով եւ մանկավարժական գրութիւններով հանդէս կու գայ:

Մտաւորական գետնի վրայ իր յօդուածագիրի շնորհներով փայլած է նաեւ ազգային-եկեղեցական, քաղաքական եւ մշակութային հարցերու շուրջ ստորագրած բազմաթիւ յօդուածներով, որոնք լոյս տեսած են «Սուրիա», «Եփրատ», «Արարատ», «Զարթօնք», «Մասիս» եւ «Զահակիր» թերթերուն մէջ:

Իր կրթական, ազգային-հայրենասիրական եւ մտաւորական գործունէութիւնը, ազգապահպանման նուիրեալ գործիչի հանգամանքով, մեծապէս գնահատուած է Խ. Հայաստանի Սփիւռքահայկական հետ Մշակութային Կապի Կոմիտէութեան կողմէ, մէկէ աւելի անգամներ հրաւիրուելով Հայաստան եւ արժանանալով «Պատուոյ Գիր»ի հանրանուէր գործիչի վաստակին համար, իսկ «Արժանաւոր Կրթական Մշակ»ի գնահատագրումով զինք պարգեւատրած է նաեւ Հալչպի Կրթական Տնօրէնութիւնը:

Իր կեանքին մէջ հանգիստ չճանչցող մարդը, որ Ռուբէն Տիրարեանը եղած է, հանգստեան կոչուած տարիներուն բոլորանուէր ջանքերով նուիրուեցաւ «Կիլիկեան Կրթական Հաստատութեան» (1921-1996) Յուշամատենանի պատրաստութեան՝ որպէս գլխաւոր խմբագիր: 1022 էջերէ բաղկացած կրթողային հատոր մըն է Կիլիկեանի Յուշամատենանը, որուն էջերէն կը ստղանցեն Կիլիկեանի պատմութեան նախահիմքերը, գործունէութեան էջերը, զայն կանգուն պահած դէմքերը, Կիլիկեանի շուրջ գործած միութիւնները, կրթական մշակները, տնօրէն ուսուցիչ եւ մանաւանդ 75-ամեայ հունձքերը, լուսանկարներու ձոխ եւ վաւերագրական միջերկրով:

Սփիւռքահայ դպրոցի պատմութեան համար կարեւոր իրագործում մը:

Քառասուն օրերէ ի վեր ոչ եւս է Ռուբէն Տիրարեան, բայց ան կ'ապրի իր յիշատակներով, բեղուն վաստակով եւ իր անունը անջնջելիօրէն կը մնայ Հալչպի մանկավարժական եւ հասարակական միտքի պատմութեան մէջ:



## ԿԻՐԱԿԻ, 31 ԲՈԿՏԵՄԲԵՐ 2010

11-րդ տարեկան Telethon «Քաջ Նազար»ի գլխաւորութեամբ:  
Նուիրուած «Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ երեխաների  
Սր. Ծնունդի և դպրոցաշինական ֆոնտին» 380 AMGA կայանով  
**818-239-6880, 818-606-2070, 818-246-0125**  
www.fourourkids99@gmail.com. **ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԶԻՍԱԶԱԶԵԻՆԸ:**

# «ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ» ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐԻ ԿԵՐՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ



Հ.Բ.Լ.Մ. Երուանդ Պապայան Մանկավարժական Հիմնարկի գործունեությունների ներս գործող «Ազգանուիրում» Սեպտեմբեր ամսուան հանդիպումը տեղի ունեցավ Շաբաթ, Սեպտեմբեր 18, 2010, առաւօտեան ժամը 10:30ին, Հ.Բ.Լ.Մ.ի Փաստինայի համալիրին ներս: «Ազգանուիրում» ծրագիրը վերականգնում է 4000-ամեայ հայկական աւանդական սովորույթներն ու պատանիներու ազգային ընծայումն: Անոր նպատակն է հայ պատանիին մօտ արթնցնել ազգային ինքնագիտակցութիւն, սէր ու յարգանք հայ լեզուին, մշակոյթին եւ պատմութեան հանդէպ, ծանօթացում հայկական աւանդութիւններու եւ կենցաղային սովորույթներուն ներշնչում աստուածասիրութիւն, սերմանում ուսումնասնելու թիւն եւ կերտում պատասխանատուութեան տէր անձեր: Սոյն ծրագիրն կրնան անդամագրուիլ Միջնակարգէն Երկրորդական փոխանցող աշակերտներ: Իւրաքանչիւր խումբ տարուան մը ընթացքին՝ ամսական դրութեամբ, հանդիպումներու կը մասնակցի: Սոյն հանդիպումներուն յաջողութիւնը կ'ընդգրկեն զարգացման եւ ընկերական բաժիններ: Իւրաքանչիւր աշակերտ կ'ունենայ իր մէկթորը, որուն հսկողութեամբ եւ ուսուցիչներու ուսանող-ուսանողուհիներ են, որոնք արդէն օժտուած են ղեկավարելու եւ դաստիարակելու արժանիքներով, եւ այս ընտրանի խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներն ու տիպար եւ օրինակելի ուսուցիչներն են, որ կը հսկեն ու կը հետեւին աշխատանքներուն:

Լոր ուսուցչուհի եւ Հայկական Բաժանմունքի վարիչ Տիկ. Լիզա Մանուկեանը, որ իր դիւրահաղորդ եւ ինքնատիպ ոճով ներկայացուց Սասունցի Դաւիթի դիւցազնավէպը՝ հետաքրքրական եւ խիստ շահեկան մօտեցումով: Տիկ. Մանուկեանը ներկաներուն ուշադրութեան յանձնեց քաղաքական եւ ընկերային այժմէական իրադարձութիւններուն ընթացքին մեր ղեկավարներուն ցուցաբերած խրոխտ ու պահանջատէր կեցուածքները, որոնցմէ օրինակ մեր երկու կաթողիկոսներուն Վանայ Սուրբ Խաչ եկեղեցիին մէջ, Սեպտեմբեր 19ին, կայանալիք պատարագին շնորհակցելու որոշումը եւ այլ օրինակներու ընդմէջէն մատնանշեց հայ ժողովուրդը յատկանշող այն ազգային յատկութիւնները, որոնք Սասունցի Դաւիթի տիպարը կը մարմնաւորեն: Տիկ. Մանուկեանը ներկաներուն ուշադրութեան յանձնեց նաեւ, որ իրենց մասնակցութեամբ եւ ներկայութեամբ՝ «Ազգանուիրում» ի հանդիպումներուն ու աշխատանքներուն, արդէն սկսած են սատարել սփիւռքի գոյատեւման վսեմ աշխատանքին: Յովսէփեան վարժարանի Ը. կարգի աշակերտներէն՝ Դաւիթ Մաթոսեանը ապրումով արտասանեց Գէորգ Էմինի «Սասունցիների Պարը» բանաստեղծութենէն բաժին մը: Ապա, ելոյթ ունեցաւ Արմանտ Երջանեանը, Հ.Բ.Լ.Մ.ի տիպար սկաուտներէն՝ որ Boy Scouts of America-ի Արծիւի բարձր աստիճանին արժանացած է եւ վերջերս հրաւիրուած էր մասնակցելու Boy Scouts of America-ի աշխատանքներուն: Արմանտը սահիկներով ներկայացուց եւ խօսեցաւ իր ունեցած փորձառութեան մասին, ուր 40,000 սկաուտներուն մէջ, ինք մասնակցող միակ հայ սկաուտը եղած էր: Հանդիպման աւարտին, խօսք աւին

Շարք էջ 18

# ՌԻԹԱ ՍՈՒԼԱՅԵԱՆ-ԳՈՒՅՈՒՄԵՆԱՆԻ ԵՌԱՅԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Կլենտէյլի Հանրային Կեդրոնական Գրադարանի Հանդիսարահը Ուրբաթ, 17 Սեպտեմբերի երեկոյան ժամադրաւայրն էր գրասէր ընտրանիի մը, որ եկած էր ներկայ գտնուելու Մոնրէյալէն ժամանած Ռիթա Սուլայեան-Գոյումեանի անգլերէնով հեղինակած եռահատորին ներկայացման: Եզակի այս ձեռնարկը կազմակերպուած էր Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղին, Արարատ Տան Էսքիճեան թանգարանին եւ ՆԱԱՍՐ (National Association for Armenian Studies and Research) Հիմնարկին գործակցութեամբ:



«... Թաղման թափօրի մէջ առանձնակի բարձրանում էր մի հասակ, ինչպէս մատղաշ անտառի մէջ մի վեհ կաղնի: Դա «որբաշխարհից» դուրս եկող հայ հասարակութեան ամենաճանաչուած եւ սիրուած մարդն էր, նրա միակ ներկայացուցիչը մեր մէջ, որբերի մէջ, որոնք տանում էին թաղելու իրենց ննջեցեալ ընկերոջը: Այդ մարդը մեր «Հայրիկն էր» մեծ թուժանեանը:

Նա տխուր ուղեկցեց մեր որբ ընկերոջ դազողը մինչեւ գերեզմանոց, ներկայ եղաւ թաղման ամբողջ արարողութեանը, մեզ հետ բաժանեց մեր վիրտուտ, տխուր խօսքեր ասաց, գերեզմանասանից հեռացող վերջիններից մէկն եղաւ: Այդ թաղման լուսանկարը բազմաթիւ օրինակներով գտնուում էր շատ որբերի մօտ եւ նրանք պահում էին իբրեւ սրբութիւն: Հայ ժողովրդի մեծագոյն բանաստեղծը հազարաւոր որբերի հետ կանգնած մի որբ պատանու դազողի մօտ:

Դա լուսանկար չէր միայն: Դա մի էջ էր հայ ժողովրդի պատմութիւնից»:

### ԿԵԱՆՔԸ ՎԱՅԵԼՔ Է ԵՐԹԷ ՎԱՅԵԼԵԼ ԳԻՏԵՆՔ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Մեր սեփական կեանքին տեղողութիւնը չենք գիտեր, որովհետեւ աստիկ կախում չունի մեր փափաքէն ու կամքէն: Բայց եթէ փափաքն ու կամքը ունինք աւելի երկար ապրելու՝ կամքը կրնայ օգնել մեր փափաքը որոշ չափով իրականացնելու: Այս տեսակետը առնչուած է անոր հետ որ երկար ապրելու պատճառ եւ արդարացում ունի՞ք: Օրինակ, դուն ի՞նչ կ'ընես որ հասարակ մահականացուն չընես: Ի՞նչ իրաւունք ունինք Ամենակալին ակնկալելու որ քեզի աւելի երկար կեանք պարգեւէ քան դրացիիդ, որ պալատանման տուն եւ դիզուած հարստութիւն ունի: Քովդ համեստ տուն մըն է փոքր հողակտորով մը, ուր կը ճգնիս բանջարեղէն մշակել, մինչ միւսը բանջարեղէնին լաւագոյնը շուկայէն կը գտնէ:

Դուն անշահաբեր բաներու ետեւէն կը վազեմ՝ ամբողջ ժամանակը եւ ունեցած կարողութիւններդ կը վատնես թերթերուն յօդուած հասցնելու համար, որուն փոխարէն «սպիրտ» մը կը ստանաս երբեմն, եւ տակաւին, փոխանակ փորձառութենէդ դաս քաղելու, ատենը մէջ մը գիրք ալ կը հրատարակես՝ տարիներու ինսպիրտութիւնդ անվերադարձ վատնելով:

Իսկ միւսը գործ կ'ընէ, գո՛րծ: Կը գնէ ու կը ծախէ: Եթէ պէտք ունենայ, քեզի պէս գրոց-բրոցներ ալ կրնայ գնել: Կրնայ ըլլալ: Չեմ հերքեր որ ամէն բանի պէս ծախու գրողներ ալ գտնուին շուկային մէջ, բայց ես գո՛հ եմ անվճար եւ անկախ վիճակէ: Բացառիկ գոհունակութիւն կը զգամ, երբ երբեմն, անկախ եւ վտանգաւոր ուղիներէ կը քալեմ, գիտնալով հանդերձ որ թշնամիներ ալ կը շահին, աւելի մեծ թիւով գնահատողներու դէմ: Ահա, այդ գոհունակութեան մէջ կը գտնեմ վարձատրութիւնս, որ որքան ալ հարուստ ըլլայի պիտի չկարենայի

տիրանալ անոր, եւ այս է վայելքը, եթէ վայելել գիտեսք:

Հարցոցէք հարուստ դրացիիս թէ ինք կըրցած է տիրանալ այդ գոհունակութեան: Ես կը կարծեմ՝ ոչ: Որովհետեւ դեռ կը փնտռէ ու կը հետապնդէ հոգեկան գոհունակութիւն, կամ երջանկութիւն ըսուածը, որ իրարու ետեւէ փոխուող նոր ինքնաշարժներով եւ սուղ պանդոկներու կամ ճաշարաններու մէջ ձեռք չ'անցնիր, իր ունեցած հարստութիւնը քանի միլիոնի ալ հասնի երբեք պիտի չբաւէ այդ հոգեկան գոհունակութիւն ըսուած հազուագիւտ ապրանքը գնելու: Եւ սակայն անխոնջ կերպով կը շարունակէ վազել, առանց գիտնալու որ փնտրածը իր հետեւած ճամբուն վրայ չի գտնուիր: Ես համեստօրէն եւ անկեղծօրէն հարուստ դրացիիս պիտի թէլադրէի որ սկսէր պարտէզ մշակել, հայերէն թերթ ու գիրք կարդալ, գիրքի մը հրատարակութեան ծախսը հոգալ, քանի մը աշակերտի կըրթաթուղակը վճարել, ազգային կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններու նիւթապէս օգնել, եւ տակաւին ինչ որ կը կարծէ թէ օգտակար կրնայ ըլլալ հայ ազգին եւ մարդկութեան:

Եթէ կրնայ ընել այս բոլորը, կամ մէկ մասը անոնց, իր կեանքը կ'իմաստաւորուի այն համեմատութեամբ որ կը ջանայ ընել վերոյիշեալները՝ իրաւունք ունենալով Ամենակալին աւելի երկար կեանք խնդրելու: Այսպիսով է որ կեանքը վայելք մը կ'ըլլայ ու կը սկսի վայելել գայն: Որովհետեւ, ֆիզիքական պահանջներուն գոհացում տալու զուգահեռ կայ նաեւ հոգեկան գոհունակութիւնը՝ տալուն ու ծառայելուն ճամբով, որպէսզի իրաւ եւ ամբողջական ըլլայ երջանկութիւնը:

Այլապէս, խորհուրդ պիտի տայի որ իր միլիոնները հաւաքէր եւ անդիի աշխարհ չուէր մեծահարուստ դրացիս, փորձելով հոն գտնել ինչ որ այս աշխարհին մէջ չէր կրցած գտնել:

ՇԱՐԱՐԱՅՄԱՆ ԵՐԵՎԱՆ

Պոլոս Մարմարա Օրաբերի Փոխ խմբագրապետուի

**ՄԱՐՐՈՒՏԻ ՊԻՒՅԻՒՔՅԱԿՈՒՅԵԱՆԻ**

**«Մանկութեան Փողոցներուն Մէջ»**

Հեղինակած հատորին մասին

Հատորը պիտի ներկայացնէ

**Փրօֆ. ՕՇԻՆ ԲԷՇԻՇԵԱՆ**

Տեղի պիտի տնկայ Ուրբաթ, 15 Հոկտեմբեր, 2010 երեկոցեան ժամը 8:00 ին

Պոլսանոց Միտրեան «ՎՊԱԴՆ» գրասենյակ մէջ

Տեղակայելու համար հարցազեկու Գ. Աւետիսեան (818) 800-1978 cell

ՄՈՒՏԵԼ ԱՐԱՏ

ՀՆԱԿԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

---

**INTRODUCTORY EVENING**

Organized by

*The Cultural Committee of the OIA*

Introducing

The Vice-editor of "Marmara" daily in Istanbul

**MAKRUHI BUYUKHAGOPIAN's Book**

**"Mangootyanes Poghotsneroun Mech"**

Presentation of the book by Prof. OSHEEN KESHISHIAN

Friday, October 15, 2010 at 8:00 PM at OIA's "HIRANT BINK LECTURE HALL"

For more info please call Dr. Channes Kulak Avedikyan at 818-800-1978

From Glendale Take Route 134 West and merge onto CA-134 West/Route 134 West Merge onto US-101 N, Take exit 25 for Wimmerka Ave toward Woodland Hills, Turn right at Wimmerka Ave, Turn right at Sherman Way, Destination will be on the right

# ՓԱՌՔՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

## Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա՛, հոկտեմբեր ամիսն է, աշնանային եղանակի մուտքն առաջին իր բնութեան նախշուն զարդարանքով: Տարուայ իւրաքանչիւր ամիսը հարուստ է անցեալի տարատեսակ պատմութիւններով, Հոկտեմբերը մեզ համար առաւել, քանի որ իւրաքանչիւր տարի այս ամսում դպրութիւնն եւ մշակոյթ կերտող աստղաբոյլ երախտաւորներն յիշատակին նուիրուած կատարում են տօնակատարութիւններ, միջոցառումներ եւ հանդիսութիւններ հայրենիքում եւ Սփիւռքում: Հանրագումարի է բերում մէկ տարուայ ձեռքբերումները եւ ներկայացւում են արւեստից նոր ստեղծագործութիւններ: Մշակոյթը որեւէ մի ժողովրդի էութիւնն է ներկայացնում: Մենք հայերս հնադարեան մշակոյթ ունեցող ժողովուրդներից ենք, իւրայատուկ պատմութեամբ, լեզուով եւ աւանդութեամբ:

Մեր պապերի մշակութային ստեղծագործութիւններից այն ինչ հասել է մեզ՝ հրաշքով գերծ են մնացել մեր երկիրը կողոպտող ու թալանող թշնամիների ձեռնահասութիւնից: Ստեղծագործող ու շինարար մեր ժողովրդի ողջ արարումները եթէ պահպանէին, ով գիտէ ինչ նախանձեղի վիճակ պիտի ներկայացնէինք: Մեր պապերի գլխից կտրուած է եղել երկար խաղաղ պայմանների գոյավիճակը, շարունակ արշաւանք, կռիւ, օտարների տիրապետութիւն, գերութիւն, ջարդ եւ կոտորած ու փոթորկալից վիճակ, Նրանք ամենակարճ խաղաղութեան պայմաններում իսկ արւեստի կոթողներ են ստեղծել, որոնցից շատ քչերն են մեզ հասել, այն էլ ինչ հասել է ապացոյցն է մեր ժողովրդի բարձրարւեստ կարողականութեան:

Մշակոյթի ճառագայթող հիմնաքարը պատկան ժողովուրդն է իր տաղանդներով ու ձիրքերով, դպրութեան առանցքն է կազմում լեզուն եւ լեզուամտածողութիւնը: Մեր հայերիս լեզուն հայերէնն է, որի այբուբենի արարիչն եղաւ Մեսրոպ Մաշտոցը կեանքի կոչելով 406 թուին: Մեսրոպեան տառերի գիւտով հիմքը դրւեց հայոց դպրութեան, որը դարձաւ հայ ժողովրդի յաւերժի երթի ճամբան:

Մշակոյթի տօնի առիթով սոյն պոէման ձօնում եմ Մեսրոպ Մաշտոցին եւ հայոց մտքի ու բանի գանձատունը հարստացնող եւ ձոխացնող արւեստից ստեղծագործողներին, Մեսրոպեան Չահր վառ պահող մեր ուսուցիչներին եւ բոլոր նրանց, որոնք իրենց հայապահպանման ծառայութիւնն են բերում առ ի գոյատեւումն սերունդների եւ հայոց մշակոյթի:

Տարօն գաւառի Հացեկաց գիւղում,  
Շինական Վարդանի ընտանիքում,  
Յամի տեառն 360 թուականին,  
Մի մանուկ ծնուեց:

Նրան կոչեցին Մեսրոպ անուն,  
Յետոյ անուն-ազգանուն ընդելուզում,  
Ոնց ջախը ժամի լոյսերով փնջում,  
Յորջորջեց Մեսրոպ Մաշտոց անուն:

Յունաց եւ պարսից ենթակայ երկիր,  
խեղճ ու թշուառ ժողովուրդը մեր,  
Անպաշտպան օտարի յոյսին լքում,  
Ձուլման վտանգին ենթարկում:

Յունաց եւ ասորաց աղօթագրքերը  
Անհաղորդ էր դարձրել նոր կրօնի սերը,  
Լեզուն կաղապարող տառեր էր պէտք,  
Սեփական լեզուով դպրութիւն էր պէտք:

Ահա այդ մտքով Սահակի մօտ շտապեց,  
Սահակը վեհ կաթողիկոսն հայոց ազգի  
Ուշադիր լսեց այն ինչ Մեսրոպ զեկուցեց,  
Ապա արին որոշում գնալ դուռն արքայի:

Հայ լեզուի նշանագրերի հարցն էր դրւում,  
Ինքնուրոյն դպրութեան կարիքն էր մղում,  
Որ դէմն առնէր օտարների քարոզչութեան,  
Որ պաշտպան կանգնէր ազգի ինքնութեան:

Թագաւորը բարեմիտ լսեց նրանց խօսքերը,  
Խիստ կարեւոր նկատեց նրանց առաջարկները,  
Ապա յայտնեց, թէ՛ տառեր կան գտնուած,  
Ոմն ասորի Դանիէլի մօտ պահուած:

Թագաւորի հրամանով ոմն արքունի Վահրիճ  
Բերելով ալփաբետները Մեսրոպին յանձնեց,  
Նա անափ ուրախութեամբ կատարուած գործից  
Մեծ նուիրուածութեամբ աշխատանքի լծեց:

Նա թագաւորի հրամանով եւ կամօքն Սահակի  
Իր հետ առնում է մի խումբ աշակերտներ՝  
Յովնան, Յովսէփ, Եզնիկ, Կորիւն, Վահան..  
Ուղեւորում է սահմանակից քաղաքներ:

Ամիդ եւ Եդեսիա դպրութեան քաղաքներ,  
Ասորաց լեզուի ճանաչուած կենտրոններ,  
Ուր Մեսրոպ իր խմբով այնտեղ ճամբորդեց,  
Ապա անդ՝ Եդեսիայում հաստատուեց:

Նա աշակերտներին երկու խմբի բաժանեց,  
Եդեսիան դարձաւ մէկ խմբի ուսման կայան,  
Ուր կարիք էր նրանց սերտեն լեզուն ասորաց,  
Ապա թարգմանութեամբ զարկ տան ազգիս դպրութեան:

Միւս խմբին Յունաց Սամոսատ քաղաքը դրկեց,  
Որ այնտեղ Յունաց դպրութեան վարժեն,  
Իսկ ինքը Եդեսայում լեզուներ ուսումնասիրեց,  
Կարդաց, պրպտեց ու քննեց անթիւ մատեանք:

Երկնեց հայաոգի խորհրդաւոր նշանագրերը,  
Հայի արիւնից ու էութիւնից ծնուած գրերը,  
Հայի հոգու պէս գեղեցիկ ու շնորհալի տառերը,  
Հայի անցեալը, ներկան ու ապագան պատմող աւետարանը:

Երանելիի ցանած հունդերը ծիւեր արձակեցին  
Տառերը ծնւեցին, յաղթութիւն մեծ անասելի,  
Տքնաջան աշխատանքը յաջողութեամբ պսակուեց,  
Բիւր օրհնութիւն ի փառս մեր Մեսրոպ Մաշտոցին:

Նշանագրերը գեղագիր յոյն Հռոփանոսի մօտ տարուեց,  
Բաղաձայն ու ձայնաւոր կարգաւորուեց ու պատկերագարուեց,  
Մէկ-մէկ նախշուն պաստառ ալգաբացի հրաշալի տեսարան  
Պարգեւ տուեց Սուրբն Մեսրոպ Մաշտոցի կողմից հայութեան:

Լուրը տառերի գիւտի եւ վերադարձը Մեսրոպի  
Փայլակի արագութեամբ Վաղարշապատ է հասնում,  
Թագաւոր, կաթողիկոս, պալատականներ եւ իշխանք  
Բոլորով մէկտեղ նաեւ ժողովուրդը ընդառաջ են գնում:

Քաղաքից դուրս Ռահ գետի ափունքին տօնական շուքով  
Շքախումբը հայկական, խաչերով ու խաչվերացներով,  
Հոգելից ուրախութեամբ եւ ապագայի վառ երազներով,  
Մեսրոպի եւ աշակերտների խմբի գալուն է սպասում:

Այսպէս օրեր խանդավառ,  
Հայոց երկրում,  
Մասիսների փէշին խմբուած,  
Հայորդիները տօնական՝  
Կենացներով հրավառ,  
Փառք ու պատիւ են մաղթում  
Մեսրոպին:

Աշխատանքի ընդարձակ դաշտ բացուեց,  
Մեսրոպի, Սահակի եւ աշակերտների համար:  
Նրանք երեք տեսակի աշխատանքի լծեցին՝  
Թարգմանել, գրել եւ ուսուցանել:

Առաջին գործերի մեծ գործը՝  
Քրիստոնէութեան հաւատագիրը- Աստուածաշնչի  
թարգմանութիւնն եղաւ,  
որին մասնաւորապէս հոգ էր տանում  
Սահակ կաթողիկոսը,  
նրան օգնում էին՝ Մեսրոպը եւ աշակերտները:  
Սահակը յունագէտ 25 երկար տարիներ,  
անխոնջ ու բժախնդիր Ս. Գիրքը յունարէնից  
գրաբարի վերածեց:  
Թարգմանութիւնը սրբագիր  
ճանաչւում է՝ Թագուհի թարգմանութեանց:

Բացառիկ մեծութիւն էր Մեսրոպ Մաշտոցը,  
Սահակ կաթողիկոսը,  
առանձնայատուկ էին նաեւ Թարգմանիչ վարդապետները:  
Նրանք մեր եկեղեցւոյ կողմից  
Հայ ազգային սրբերի դասին են դասուել:  
Արդարեւ արժանաւոր սրբեր:  
Թող միշտ նրանք բարեխօս լինեն,  
վսեմին ու վեհին ձգտենք,  
խոյանք դէպի բարձունքները:  
Մեծերի սխրանքով ենք գոյատեւել,  
Երախտապարտ մեր ժողովուրդը  
նրանց յիշատակին յաւերժ  
ձեռակերտ հրաշալի կոթողներ է նուիրել,  
նրանց անլռելի ղօղանջը քաղցրահունչ  
յար լսելի եւ տեսանելի է դարձրել:  
Գիտենք գնահատել,  
բայց չգիտենք դաս առնել մեր մեծերից,  
քիչ օտարներից հպատակ լինենք, օտարն է մեզ ջլատում,  
մէկ լինենք, միակամ լինենք, հայրենիքը հզօրացնենք:  
Փառքը մեծ սուրբն Մեսրոպ Մաշտոց,  
Դու մեծասքանչ լուսաւորիչ:  
Դու հայերից հայ անմահ Վարդապետ:



# ՎԱՐՎԱՆ ՏԵՐԵԱՆ. 125-ԱՄԵԱԿ ԲԱՅՑ ԵՐԲԷՔ ՉԾԵՐԱՅՈՂ ԵՒ ՄԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ ՏԵՐԵԱՆ

125 տարի առաջ, 1885 թուականի Փետրուարի 9-ին ծնունդ է առնում հայ դասական, ժամանակակից գրական հայտնի լեզուի ստեղծող, հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերեանը: Նրա մահուանից անցել է առելի քան 90 տարի, սակայն այն, ինչ հասցրեց անել Տերեանն իր կարճատեւ կեանքի 34 տարիների ընթացքում, չի հնացել: Նոյն թարմութիւնն ու կախարհական ազդեցութեան ուժն ունեն նրա սիրային բանաստեղծութիւնները, որոնց օգնութեամբ իրենց զգացմունքներն են շարունակում արտայայտել երիտասարդները: Իրենց հզօր ուժը չեն կորցրել Տերեանի հայրենասիրական ստեղծագործութիւնները, որոնք այսօր էլ հաւատ են ուժ են ներշնչում մեր ժողովրդին: Նոյն հոգին հանդարտեցնող եւ բուժող ուժն ունեն նրա լիրիկական բանաստեղծութիւնները:



Վահան Տերեանը լեզուաբան, հայ պոեզիան եւ տաղաչափութիւնը: Յայտնի է, որ հայոց համարեալ բոլոր բառերի շեշտն ընկնում է վերջին վանկի վրայ, ինչը խիստ սահմանափակում է տաղաչափութեան հնարաւորութիւնները: Հայ բանաստեղծները կաշկանդուած են դրանով եւ այդ պատճառով հայոց տաղաչափութեան համար ամէնից բնորոշն է: Տերեանը կարողացաւ շրջանցել այդ խոչընդոտը եւ դարձաւ արեւելահայ շեշտական բանաստեղծութեան հիմնադիրը՝ քորեյ, դակտիլ, ամֆիբրաքոս: Բացի այդ, նա առաջինն էր, որ հայկական պոեզիան ներմուծեց եւրոպական եւ ռուսական բանաստեղծական ձեւերը՝ սոնետը, տրիոլետը, ռոնդոն եւ բազում այլ գրական ձեւեր, նաեւ՝ ալիտերացիա-բաղաձայնոյթները:

Մինչեւ օրս ոչ մէկին չի յաջողուել Տերեանից առաւել յղկել եւ կատարելագործել գրական հայտնի լեզուն, որն այսօր էլ հտալոնի դեր է կատարում բոլոր նոր սերունդների համար: Դա հասկանում էր լուսահոգի Ռաֆայէլ Իշխանեանը, ով պարտադրում էր իր ուսանողներին արտասանել Վահան Տերեանի մի քանի տանեակ բանաստեղծութիւններ եւ դրանից յետոյ էր միայն անցնում քննութեան բուն նիւթին: Որովհետեւ կարողալով եւ անգիր արտասանելով Տերեանի ստեղծագործութիւնները, ուսանողները հնարաւորութիւն էին ստանում պրակտիկորէն տիրապետել անթերի հայերէնին:

Պոեզիայից բացի Տերեանը թարգմանել է նաեւ արձակ, մասնաւորապէս, ֆրանսերէնից՝ հայերէն է թարգմանել Օսկար Ուալդի Սալոմէ պիեսը եւ հայերէնից՝ ռուսերէն՝ Բաֆֆու Կայծեր պատմավէպը: Զարմանալի է, բայց ինչպէս եւ մէկ դար առաջ այսօր էլ նոյնքան թարմ եւ ուսանելի են Վահան Տերեանի յօդուածներում, ելոյթներում ու նամակներում արտայայտուած մտքերը մեր իրականութեան, հայ ժողովրդի ու նրա ապագայի մասին:

Մասնաւորապէս, նրանք, որոնք արտայայտուած են 1914 թուականին գրուած Հոգեւոր Հայաստան յօդուածում եւ նոյն թուականին կարդացած Հայ գրականութեան գալիք օրը գեկոյցում:

Երբ 1917 թուականի Նոյեմբերին բոլշեւիկները եկան իշխանութեան, սկզբնական շրջանում նրանց անհրաժեշտ էր այնպիսի հեղինակաւոր, գաղափարական եւ ազնիւ մարդկանց աջակցութիւնը, որպիսին որ Տերեանն էր: Պոետն, իր հերթին, հասկանում էր որ Հայաստանի եւ հայ ժողովրդի ճակատագիրը մեծ մասամբ լուծուելու է Ռուսաստանի իշխանութիւնների կողմից եւ բոլշեւիկեան կուսակցութիւնը միակն էր Ռուսաստանում, որն իր առաջնորդի՝ Լենինի շուրթերով 1917 թուականի յունիսեան պլենումում յայտարարել էր, թէ պատրաստ է անկախութիւն շնորհել Հայաստանին եւ Լեհաստանին: Բոլշեւիկները նաեւ խոստացել էին հողը տալ գիւղացիներին, գործարանները՝ բանուորներին, նաեւ՝ դադարեցնել պատերազմը: Այդ պատճառով էլ Տերեանը անդամակցեց այդ կուսակցութեանը, ակտիւօրէն մասնակցեց Հայկական գործերի կոմիսարիատի կազմակերպման աշխատանքներին, որտեղ նա ստանձնեց կոմիսարի տեղակալի պաշտօնը: Տերեանը ընտրուեց նաեւ Համառուսաստանեան Կենտրոնական կոմիտեի անդամ, նրան էր յանձն արարուել գրել Թուրքահայաստանի մասին գեկուցագիրը եւ կազմել Թուրքահայաստանի մասին դեկրետի նախագիծը: Այդ փաստաթղթերում Վահան Տերեանը առաջարկում է վճռականօրէն պաշտպանել թուրքահայերի ազգային լիակատար ինքնորոշման ձգտումը, հայրենիք վերադարձնել բոլոր բունի արտաքսուածներին եւ յայտարարել, որ ռուսական զօրքե-

րը դուրս չեն բերուի պատերազմի իրաւունքով Հայաստանի գրաւուած մասից: Դեկրետը ստորագրուել է Լենինի կողմից, սակայն Ստալինի առաջարկով նրանից հանուել է էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթներում առժամանակ որոշ քանակութեամբ ռուսական զօրքեր թողնելու անհրաժեշտութեան մասին կէտը: Այդ հարցով Տերեանը բուռն վէճ է ունեցել Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիսար Ստալինի հետ ու իրերի վիճակը բացատրել Լենինին: Յիշեցնենք, որ Հայկական գործերի կոմիսարիատը կից էր Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիսարիատին, հետեւաբար նրա կոմիսարի տեղակալը՝ Տերեանը, Ստալինի ենթական էր:

1918 թուականին Տերեանն իր անմիջական մասնակցութիւնը ցուցաբերեց Հիւսիսային Կովկասում եւ Ասորիստանում քաղաքացիական պատերազմի թոհուբոհում յայտնուած հազարաւոր հայ փախստականներին փրկութեան գործին: Օգտագործելով Խորհրդային կուսակցութեան կողմից տրամադրուած առելի քան 6 միլիոն ռուբլի գումարը եւ 2 վագոն դեղամիջոցներն ու այլ ապրանքները, նա, վտանգելով իր կեանքը, գլխաւորեց Մոսկուայից ժամանած բժշկասանիտարական խումբը եւ անձամբ էր զբաղւում փախստականներին տեղի հայերի տներում եւ այլ կացարաններում տեղաւորելու հարցերով, տրամադրում էր նրանց ապրուստի միջոցներ, ստեղծում էր աշխատատեղեր, ապահովում էր նրանց անվտանգութիւնը: Ընդամիս, պոէտը, որին նրա լիրիկական բանաստեղծութիւնների պատճառով շատերը պատկերացնում են որպէս երկչոտ եւ թախծոտ մարդ, ցուցաբերել է նախանձելի քաջութիւն եւ առնաստիակութիւն՝ փրկելով իր պայուսատու պահուող 6 միլիոն ռուբլին, երբ գնացքը, որով նա մեկնել էր Կովկաս, գրաւել են աւազակները: Նոյնպիսի քաջութիւն պոէտը ցուցաբերել է նաեւ Հիւսիսային Կովկասում, որտեղ տեղի իշխանութիւնը ներկայացնող որոշ կոմունիստ դեկավարներ գէնքի սպառնալիքով պահանջել են, որ Տերեանն իր մօտ եղած գումարները տրամադրի իրենց կոմունիստական կարիքների համար: Վահան Տերեանի այդ հայրենասիրական պահուածքի համար

նրան մեղադրել են հայ նացիոնալիստ լինելու մէջ, քանի որ Խորհրդային կառավարութեան կողմից իրեն տրամադրուած բոլոր գումարները նա օգտագործել է բացառապէս հայերին օգնելու համար: Հիւսիսային Կովկաս կատարած իր առաքելութեան շրջանակներում Վահան Տերեանը օգնել է նաեւ տեղի շնորհալի հայ երիտասարդներին, որոնցից մէկն էլ քանդակագործ Երուանդ Քոչարն էր: Տերեանը տրամադրել է նրանց փաստաթղթեր ու գումար եւ բացատրել է, թէ ինչպէս պէտք է նրանք քաղաքացիական կռիւների հրում յայտնուած իրենց բնակութեան վայրերից հասնեն Մոսկուա, որտեղ կը կարողանան սովորել եւ յղկել իրենց բնատուր տաղանդները: Համառուսաստանեան Կենտրոնական կոմիտեի անդամ Տերեանը Մոսկուայում նոյնպէս հովանաւորել է նրանց: Նշենք, որ Կենտրոնական կոմիտեի նախագահ Վահան Տերեանը 1918 թուականի Յուլի 6-ի մոսկովեան խուրվութիւնից յետոյ, երբ Լենինի հրամանով փակուել էին բոլոր «բուրժուական» կազմակերպութիւնները, իսկ նրանց ունեցուածքը բռնագրաւուել էր, Տերեանը փրկել է Մոսկուայի հայկական եկեղեցու հարստութիւնները: Նա, յղում կատարելով 1918 թուականի Յուլի 19-ի Լենինի կարգադրութեանը, ըստ որի Հայկական գործերի կոմիսարիատին պէտք է յանձնուէին Ռուսաստանում գտնուող բոլոր ոչ կոմունիստական հայկական կազմակերպութիւնների փաստաթղթերը, շինութիւնները, ունեցուածքը եւ կապիտալը, թոյլ չի տուել, որ չեկիտները բռնագրաւեն Մոսկուայի հայկական եկեղեցու հարստութիւնները:

Տերեանը կողպել եւ կապարակն քել է եկեղեցու դռները, այդպիսով փրկելով նրա մէջ գտնուող գանձերը, որոնք հետագայում, Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, վերադարձուել են Ս. Էջմիածնին: Վահան Տերեանը չի ընկրկել, կռիւ է տուել Լեւ Տրոցկուին եւ Իոսիֆ Ստալինին՝ պաշտպանելով Հայկական հարցի հայանպաստ լուծումները, ինչի համար արժանացել է նրանց թշնա-

Շաբ.ք էջ 18

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

### ՀԱՍՏՄՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԴԵՂԱԲՈՅՍԵՐ

Բանջարանոցային սոխը լի-  
նում է 4 տեսակի, որոնցից ամենա-  
լավը սպիտակ սոխն է: Եթէ նոր  
սկսուող կատարակտի ժամանակ  
նրա հիւթը կաթեցնէք աչքերին,  
ապա այն կը կանխարգելի կատա-  
րակտի զարգացումը, կը մաքրի  
աչքերն ու կը լաւացնի տեսողու-  
թիւնը: Սպիտակ սոխը լաւացնում  
է ախորժակը, մեծացնում սեռական  
պոտենցիան, նաեւ վերացնում մաշ-  
կի դեղնածուծութիւնը, բացում անօթ-  
ները եւ կարգաւորում արեան հոս-  
քը, բուժում եղունգների տարբեր  
հիւանդութիւններ: Սոխը վերաց-  
նում է նաեւ տարբեր տեսակի  
թունաւոր նիւթերի ազդեցութիւնը:  
Աւելի լաւ է սոխն օգտագործել  
տապակած կամ եփած վիճակում:  
Եթէ սոխի հիւթն ու աղը խառնէք  
իրար եւ դնէք գորտնուկների վրայ,  
դրանք կ'անհետանան: Ճամբորդե-  
լիս եթէ սոխ ուտէք, այն կը  
պահպանի կլիմայի փոփոխութեան  
հետ կապուած տհաճութիւններից:  
Եթէ սոխը խորովէք տաք ջեռոցում  
եւ տաքտաք ուտէք, ապա դա կը  
նպաստի դաշտանի սկսուելուն, կը  
դադարեցնի լորձի արտադրութիւնը  
եւ կը փափկեցնի կուրծքը:

**ՍԽՏՈՐԸ** լինում է վայրի եւ  
բանջարանոցային: Ամենալաւ մեծ  
գլխով սխտորն է: Սխտորը վերաց-  
նում է աչքերի տակի այտուցները,  
հաճելի է դարձնում սեռական մեր-  
ձեցումը այն մարդու համար, որ  
դրանից հաճոյք չի ստանում:

Սխտորն օգնում է թաց հագի  
ժամանակ, վերադարձնում է ձայնը,  
դաշտանը առատ է

դարձնում, արգանդից դուրս է  
բերում ընկերքը: Այն բուժում է  
թուփքը, օգնում է մէջքի ցաւի  
ժամանակ, մեծացնում սեռական  
պոտենցիան, լաւացնում է դէմքի  
գոյնը:

Այն օգտակար է նաեւ փայծա-  
ղի համար: Սակայն սխտորը կարող  
է խոցերի առաջացման պատճառ  
դառնալ, վատացնել տեսողութիւնը,  
առաջացնել գլխացաւեր: Սխտորի  
վնասակար

յատկութիւնները վերացնում  
են քաղցրի ու իւղը:

**ՀԻԼ** (մեկի կարգամոն): Ամե-  
նալաւն այն հիւն է, որն աւելի սուր  
հոտ ունի: Հիւն օգնում է ստամոք-  
սին եւ լեարդին, դադարեցնում է  
սրտխառնոցը, փսխումը, ամրաց-  
նում սիրտը: Յուրտ եղանակին  
հիւը տաքացնում է ստամոքսը,  
լեարդը, այլ օրգաններ, եւ ամրաց-  
նում դրանք: Սակայն հիւը լեարդի  
համար վնասակար է: Հիւը կարելի  
է օգտագործել օրական 1,47 գրա-  
մից ոչ աւելի:

**ՄԵՆԱԿ:** Ամենաօգտակարը մե-  
խակի այն տեսակն է, որն աւելի  
սուր հոտ ունի, քաղցր է եւ մի  
թեթեւ դառնաւուն: Այն հաճելի է  
դարձնում բերանի համը, վերաց-  
նում է տհաճ հոտերը եւ ականջների  
խշշոցը: Մեխակը նպաստում է  
մազերի պնդացմանը, լաւացնում  
տեսողութիւնը: Այն ամրացնում է  
սիրտն ու լեարդը, մեծացնում սե-  
ռական պոտենցիան:

Եթէ ամէն ամիս մեխակի թուր-  
մով լուանաք գլուխը, կարող էք  
խուսափել յղիանալուց: Օրական  
չափաբաժինը՝ 1,47 գրամ: **ՄԵՒԱ-**  
**ԿԻՆ** կարող է փոխարինել մշկըն-  
կուցը (մուսկատոնի օրեխ) կամ  
դարչինը (կասիա):

**ԴԱՐՉԻՆ:** (կասիա) Ամենալա-  
ւը մանր, կարմրաւուն դարչինն է:  
Այն օգտակար է ստամոքսի համար,  
դուրս է մղում լորձն ու խոնաւ  
արտադրութիւնը: Օրական չափա-  
բաժինը՝ 2,2 գրամ: **ԴԱՐՉԻՆ** բա-  
ցում է երիկամների եւ արգանդի  
կալումները,

առատ դարձնում միզարտադ-  
րութիւնն ու դաշտանը: Այն մաք-  
րում է երիկամներն ու միզապար-  
կը: Սպանում է ճիճուներին: Եթէ  
1,47 գ դարչինը մանրացնէք, խառ-  
նէք մեղրի

հետ եւ քսէք շարժուող, ցա-  
ւացնող ատամին, ապա ցաւը կ'անց-  
նի եւ ատամը կամրանայ: Սակայն  
դարչինը վնասակար է փայծաղի  
համար եւ կարող է խոց առաջաց-  
նել: **ԴԱՐՉԻՆԻ**

վնասակար յատկութիւնները  
չէզոքացնում է մաղախանոսի սեր-  
մը:

**ԿՈՃԱՊՂՊԵՂԸ** (իմբել) լի-  
նում է երկու տեսակի՝ չինական եւ  
հնդկական: Այն լիցքաթափող յատ-  
կութիւն ունի: Օգնում է կաթուածի  
եւ դէմքի ծուռածութեան ժամա-  
նակ: Կոճապղպեղը նպաստում է  
ցրտից եւ լորձից առաջացող հիւան-  
դութիւնների դէպքում: Այն սրում  
է միտքը: Եթէ կոճապղպեղը լցնէք  
աչքերի մէջ, դա կը վերացնի  
աչքերի դէմ մթնելը եւ թանձր լորձ  
կը հանի կոկորդից: Այն նպաստում  
է նաեւ մարսողութեանը, մաքրում  
եւ տաքացնում ստամոքսն ու լեար-  
դը: Եթէ կինը հեշտոցի մէջ մտցնի  
մեղրի հետ խառնած կոճապղպեղ,  
ապա դա կը նպաստի մերձեցումից  
հաճոյք ստանալուն: Օրական չա-  
փաբաժինը՝ 1,47 գրամ: Սակայն  
կոճապղպեղը վնաս է տաքարիւն  
մարդկանց: Կոճապղպեղին կարող է  
փոխարինել սովորական պղպեղը:

**ՍԵՒ ՊՂՊԵՂԸ** լիցքաթափող  
յատկութիւն ունի, հանգստացնում  
է նեարդերը: Այն դադարեցնում է  
լորձի արտադրութիւնը: Օգնում է  
արցունքաբերութեան ժամանակ, օգ-  
տակար է ցրտից առաջացած հագի  
դէպքում: Բացում է ախորժակը,  
նպաստում մարսողութեանը: Սեւ  
պղպեղը տաքացնում է ստամոքսն ու  
լեարդը, դուրս բերում տափակ ճի-  
ճուներին: Պղպեղը նաեւ հակաթոյն  
է համարում: Սակայն սեւ պղպեղը  
հիւժում է մարմինը: Սրան կարող է  
փոխարինել սպիտակ պղպեղը:

**ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂԸ** իր յատկա-  
նիշներով մի քիչ թոյլ է սեւ  
պղպեղից: Այն մաքրում է լորձը եւ  
սեւ մաղձը: Չափաբաժինը՝ 2,2  
գրամ: Սակայն սպիտակ պղպեղը  
չորացնում է սերմը եւ ընդհատում  
յղիւթիւնը: Այն վնասակար է երի-  
կամների համար: Նրա վտանգաւոր  
յատկութիւնները վերացնում է մեղ-  
րը: Սպիտակ պղպեղին կարող է  
փոխարինել կոճապղպեղը:

### ՏԵՐ ԿԱՆԳՆԻՆՔ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԳԻՐԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

#### Շարունակուած էջ 1-էն

գոյատեւելու որպէս ֆաղափակրթա-  
կանօրէն ծաղկուն եւ ինֆնուրոյն  
ցեղեր, որոնց մէջ կարկառուն  
օրինակն է հայ ժողովուրդը:

Այս մտորումները ունեցաւ իր  
ազգի իրավիճակով մտահոգ Մես-  
րոպ Մաշտոց, դեռեւս իր վաղ  
երիտասարդական հասակին: Իր  
ժողովուրդը հայերէն գիրքը չունե-  
նալուն՝ իր Աստուծոյն հետ հաղոր-  
դակցելու դիրքութիւնը չունէր:  
Չունէր հյատառ Աստուածաշունչ  
Մատեանը: Կ'աղօթէր լեզուով մը,  
որ չէր հասկնար:

Մաշտոց, նաեւ ակնատես  
վկան դարձաւ Հայրենի գրաւեալ  
պարսկական բեւեռի վրայ կրակա-  
պաշտութեան տարածումին: Պար-  
սիկ կրակապաշտն ու յոյն ֆրիստոն-  
եան իրենց հարուստ մշակոյթով,  
կրօնական, լեզուական եւ ֆաղափա-  
կան միջոցներով, կը վտանգէին  
հայուն ինֆնութեան պահպանումը:  
Զայն կ'առաջնորդէին դէպի ձուլում:

Տարակոյս չկար՝ այնքան ատեն,  
որ հայր չունէր իր ուրոյն գիրքը, լեզուն  
եւ մշակոյթը՝ դատապարտուած էր  
կորուստի: Առաջին գոհերը կը  
հանդիսանային անոնք, որոնք ուս-  
մամբ տիրապետած ըլլալուն յունա-  
րէնին եւ պարսկերէնին, նախամեծար  
կը համարէին պարսկերէն եւ յունա-  
րէն լեզուները: Իսկ համեստ ժողովուրդին  
վրայ կը բռնանային օտարամուտ  
ֆրիստոնեայ կրօնականներն եւ կրակա-  
պաշտ ֆրմեր:

Մեսրոպ Մաշտոց կը գտնէր  
թէ ամէն գնով պէտք էր յօրինուեր  
հայ գիրք: Անով էր, որ ազգը պիտի  
պայքարէր ձուլման վտանգին: Անով  
էր որ ան պիտի դիմադրէր օտար  
լեզուի ստրկացնող ֆաղափակա-  
նութեան դէմ: Անով էր որ, ան պիտի  
պայքարէր օտար կրօններու ներթա-  
փանցումին դէմ: Անով էր որ հայ  
հաւատացեալը իր ձեռքին պիտի  
ունենար հայատառ սուրբ Աստուա-  
ծաշունչը, շրթներուն՝ իր հայարոյր  
աղօթքը, շնորհիւ թարգմանական  
գրականութեան: Անով էր որ պիտի  
ծաղկէր հայերէն գիրքը, զարգանար՝  
հայ գրականութիւնը, հարստանար՝  
գիտական, ուսողական, փիլիսոփա-  
յական թարգմանական ազգային  
մշակոյթը: Այս էր այն վեհիտ,  
հաստատ ու ապահով նմանապարիք,  
որ հայ ժողովուրդը պիտի առաջ-  
նորդէր դէպի յաւերժութիւն:

Այո, Մեսրոպ Մաշտոց կը  
տառապէր իր ազգի հաւատֆի  
գրկանկերով: Ան սկսած էր մտածել  
Աստուածաշունչ Մատեանը հայերէնի  
թարգմանելու մասին: Հայերէն  
գիրքերու յօրինման մասին, որ  
տակաւ անհրաժեշտութիւն կը  
դառնար: Կարենալ լաւապէս ուսում-  
նասիրելու համար Աստուածաշունչ  
Մատեանը՝ Մաշտոց յանախեց յունաց  
դպրոց, սորվելու համար յունարէնը:  
Սորվեցաւ նաեւ ասորերէնը:

Մեսրոպ Մաշտոց իր մտահո-  
գութիւնները պարզեց հայոց Հայրա-  
պետին եւ Թագաւորին, խնդրելով  
անոնց օժանդակութիւնը: Հրամայա-  
կան էր յաջողութեամբ պսակել այդ  
աշխատանքը, հայ ազգը փրկելու  
համար հոգեմտաւոր կորուստէ: Հայ  
գիրքերու յօրինման սուրբ աշխատանքը  
նուիրագործուելու էր, ամէն գնով:

Վաղարշապատ նստած՝ Սա-  
հակ Պարթեւ Կաթողիկոս տուաւ իր  
հայրապետական օրհնութիւնը եւ  
յայտնեց իր գորակոյնութիւնը: Իր  
կարգին, Հայազգի Վռամշապուհ  
թագաւոր, խոստացաւ նիւթապէս  
եւ բարոյապէս գորավիզ կանգնիլ

Մեսրոպի ծրագին, գանձիկա յաջո-  
ղութեամբ պսակելու համար:

Հայրապետական եւ արհա-  
յական գորակոյնութեան ֆաշա-  
լերու, Մեսրոպ Մաշտոց Վարդա-  
պետ, իր աշակերտներով նախա-  
ձեռնեց տնտեսական եւ բժախնդի  
գիտա-հետազոտական հետեւո-  
ղական աշխատանքի: Ճամբորդեց  
Բիւզանդիոն, այցելեց Ասորեստան:  
Յունարէն եւ ասորերէն լեզուներու  
շարքին ուսումնասիրեց այլ լեզուներ  
եւ: Արձանագրեց մայրենի նշանա-  
գրեր: Հաւաքեց ձայնաւորներ:  
Աւարտին՝ հրաշագործեց հայերէն  
տառերուն համալրումը: Նուիրա-  
գործուած էր Հայ Գիրքերու գիւտը:  
«Այր», «Բեն», «Գիմ» ի յաջող յօր-  
նումը դարձաւ մեր ժողովուրդի  
անհաւասար պարծանքը: Հայ դպ-  
րութեան հիմնադիր հայատառ  
առաջին արձանագրութիւնը հան-  
դիսացաւ Աստուածաշունչ Մատե-  
անին վերջուած հայատառ առաջին  
գիրքով Մեսրոպ Մաշտոցի կողմէ:  
Ընդօրինակուած՝ Առդմոն Իմաս-  
տունի հետեւեալ վեց տառերու մէջ  
խտացուած հանճարեղ պատգամը,  
որ կ'ըսէ.

«Ճանաչել գիմաստութիւն եւ  
գլխատ

Իմանալ գրանս հանճարոյ»

Մեսրոպ Մաշտոցի այրութեանը  
դարձաւ ուղեցոյց՝ հայ ազգի  
գոյութեան պահպանման, մեր գրաւ-  
եալ հայրենիքի դժուարին պայման-  
ներուն մէջ: Մաշտոցեան այրութեան  
յօրինման հրաշագործութիւնը՝  
փրկեց հայ ազգը, դէպի ձուլում  
առաջնորդող օտարազգի յոյն, ասորի  
եւ պարսիկ կրօններու ներթա-  
փանցումներէն եւ անոնց կապան-  
ներէն: Մեսրոպ Մաշտոց իր սխա-  
նախագործ այր, բեմ, գիմի նախա-  
խնամական յօրինումով գրահա-  
պատուած՝ դարբնեց եւ գորացուց  
իր ազգային արմատներուն հաւա-  
տարիմ մեր հաւատաւոր եւ ստեղ-  
ծագործ ժողովուրդի հաւատքը եւ  
կապուածութիւնը հանդէպ մեր  
լեզուին, մշակոյթին, հողին, հայրե-  
նիքին, եկեղեցիին եւ լինելիութեան:  
Դժուարին պայմաններու մէջ, Պար-  
սիկի եւ Բիւզանդիոնի գրաւումով,  
երկուքին միջեւ բաժնուած բազմա-  
չարչար Հայաստան աշխարհի տա-  
րածֆին ծիլ արձակեցին, ծաղկեցան  
եւ տարածուեցան Մեսրոպաշունչ  
հայարոյր դպրոցներ, որոնք Մես-  
րոպեան գիր ու լեզուով, նաեւ  
հաւատով գրահաւորեցին մեր նոր  
սերունդները: Շնորհիւ այդ գրահա-  
ւորման, անոնք կարողացան դիմադ-  
րել դարերու մահացու ասպատա-  
կումներուն, աւերակումներուն,  
ջարդ ու ցեղասպանութիւններուն:  
Շատ անգամներ հաւաքաբար գգե-  
նուեցան, կարծես անէացան՝ քայց,  
կրկին ու կրկին, Պայրոնի վկայածին  
պէս, միշտ ալ հաւաքաբար յարութ-  
իւն առին, մեր գոյութիւնը վկայ:

Այդ հաւատով, սիրով եւ  
նուիրութեամբ գրահաւո-  
րուինք, տէր կանգնելու համար մեր  
ինֆնութեան, բարձր պահելու հա-  
մար մեր ազգային արժանապատ-  
ուութիւնը, ժառանգութիւնները,  
աւանդութիւնները:

Այդ հաւատով, անհատում  
սիրով եւ նուիրութեամբ գուր-  
գուրանք մեր Մեսրոպաշունչ գիր ու  
լեզուին, մշակոյթին, եկեղեցիին, մեր  
կրթական հաստատութիւններուն,  
ազգին ու Հայրենիքին:

Այս է մեր ազգի յաւերժութեան  
երաշխիքը այսօր եւ միշտ:

Ահա՛ սրբազան պատգամը Հայ  
Մշակոյթի ամսուան:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք  
հայերէն գիրքեր,  
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել  
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O.1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

### ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐԻ ԿԵՐՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Շարունակում է 7-էն

երկնք մէջ թորներ՝ Ալլին խանձեան, Ալէքս Պապայեան, Արթին Մանուկեան եւ Քաթրին Պոստոյեան, որոնք շահեկան տեղեկութիւններ տուին իրենց կեանքի ընթացքին ձեռք ձգած փորձառութիւններուն մասին՝ ուսումնական, ընկերային եւ կազմակերպչական գործունէութիւններէն ներս:

«Ազգանուիրում»-ի յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 16ին, Հ.Բ.Ը.Մ. փաստատիրայի Համալիրին մէջ: Այդ օր Ազգանուիրումի ծրագրին մասնակցող պատանիներն ու պարմանուհիները պիտի վայելեն խիստ շահեկան ներկայացումը մը՝ Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Փեթոյեանին կողմէ՝ Սուրբ Պատարագի մասին: Յայտագրին տեղի պիտի ունենայ նաեւ սահիկներու ցուցադրութիւն:

### ՏԱՐԱԼՈՒԾԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒՅԻ ՍՈՆԱ ՄԱԼՃԵԱՆ

Շարունակում է 8-էն

ճառ դարձած է որ չի կարենայ բժշկուհի դառնալ:

«Միջին Արեւելքի մէջ շատ դժուար է կրթնապատ ստանալ եւ երազդ հետապնդել» յարեց ան: Ասոր փոխարէն Ս. Մալճեան բժշկական թէքնիք ուսումնարան յաճախեց: Այսպիսով կրցաւ նաեւ նիւթապէս նեցուկ կանգնել իր ընտանիքին: Այնուհետեւ Լոնտոն մեկնելով հետեւեցաւ տարրալուծարանի մասնագիտական ուսման ստանալով համապատասխան վկայական:

«Մեծ ցանկութիւն ունէի հաստատուել Անգլիոյ մէջ նաեւ այցելել Միացեալ Նահանգներ» ըսաւ Մալճեան: 1973 թուականին որպէս զբօսաշրջիկ որոշեց ճամբորդել դէպի Փասատինա, դիտելու աւանդական վարդերու տորանքը (Rose Parade):

Իր այս կեցութեան ընթացքին էր որ ծանօթացաւ իր ապագայ ամուսինին՝ Մինասին, որ զինք քաջալերեց ԱՄՆ-ի մէջ տարրալուծարանային գործ մը նախաձեռնելու:

Յաճախելով Գալիֆորնիոյ Նահանգային Տօմինկէզ Հիլզ Համալսարանի բժշկագիտական թեքնոլոգիի եւ վարչագիտական ճիւղը՝ զայն աւարտեց ստանալով Մագիստր

Այս տարեշրջանի փակման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 24ին, Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Սուրբ Ղեւոնդեանց նորակառուց տաճարէն ներս, ուր «Ազգանուիրում»-ի մասնակցող աշակերտները եւ իրենց մէջ թորները, առաջնորդ սրբազան հօր յատուկ ուշադրութեան պիտի արժանանան եւ նաեւ հանրութեան պիտի ներկայացուին յաջորդ շրջանին համար անդամագրուող նոր մասնակիցները: Առ այդ, այն ծնողները որոնք հետաքրքրուած են իրենց զաւակները արձանագրելու «Ազգանուիրում»-ի ծրագրին եւ զանոնք մասնակից դարձնելու ամսական հանդիպումներուն կրնան կապ պահել հեռաձայնելով հիմնարկի ներկայացուցիչներէն Տիկ. Անժելա Բարսեղեանին (818) 943-5909 կամ Լորա Գուլումեանին 310-212-5851:

րոս տիտղոսը: Այնուհետեւ, 1983ին ան ստացաւ Medical technologist-ի վկայականը, վերջնականապէս իրականացած տեսնելով իր երազը: «Երախներ ունենալ եւ գործի երթալ եւ ուսման հետեւել, այս բոլորն ինձմէ խլեցին 10 տարիներ: Ամբողջ կեանք մը մաքառեցայ այս պաշտօնին տիրանալու համար», ըսաւ ան: Արքեպիսկոպոս Մեթոսիսի հիւանդանոցին մէջ իր ուրոյն գործելակերպն ունենալով՝ Ս. Մալճեան վերջին անգամ լի քան 10 տարիներուն, ծառայեց որպէս տարրալուծարանի տնօրէնուհի:

«Ես իրապէս կը սիրեմ իմ գործս, իրականութեան մէջ ես հոս է որ հասակ առած եմ» յարեց Մալճեան: Արդարեւ ան 37 տարիներէ ի վեր կ'աշխատի այդ հիւանդանոցին մէջ:

Տնօրէնուհին կը խոստանայ իր այս հարուստ փորձառութիւնը ուրիշներուն փոխանցել յառաջիկայ ուղեւորութեան ընթացքին: «Ասիկա պիտի ըլլայ իմ կեանքիս մեծագոյն հանգրուաններէն մին, այն հաստատ համոզումով որ պիտի կարենամ ձեռով մը իմ ներդրումս ունենալ, նպատակով երկարատև տարրալուծարանային ծառայութեան մակարդակի բարելաւմին» նշեց ան: ՍԹԷՅՍԻ ՌԻԱՆԿ

### ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԱՐՏԵՄ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ

Շարունակում է 8-էն

ծարանին Research Associate-, Patapoutian Lab-ի post doctorate գիտաշխատող Պէրթրան Քոսթ:- Մինչեւ հիմա գիտնականները նշանարած էին արագ ազդեցութեան նշաններ ցոյց տուող փրոթէիններ, որոնք կը հակազդէին ջերմաստիճաններու փոփոխութեան եւ որոնք այնքան անհրաժեշտ էին ջերմագոյացութեան ուսումնասիրութեան համար: Սակայն ցարդ չէին կրնար գատորոշել եւ ճշգրտել ինքնութիւնը այդ փրոթէիններուն որոնք կը գզան եւ կը հակազդեն հպումին, ճնշումին կամ ոչոյն: Ահա այդ հիմնական բացն է որ կը գոցէ Արտեմ Փաթափութեանի գիտական անձնակազմը, իր այս նորագոյն գիւտով:»

Շարունակութիւնը զուտ գիտական մանրամասներով շարունակուած է: Այս առիթով, պէտք է

նշել նաեւ, որ համբաւաւոր Wall Street Journal -ը, այս կապակցութեամբ, իր Սեպտեմբեր 7-ի թիւով հրատարակած է Բիթըր Լէնտըրգի մէկ տեսակցութիւնը Փրոֆ. Արտեմ Փաթափութեանին հետ:

Մանօթ.- Արտեմ Փաթափութեան կրտսեր որդին է Տէր եւ Տիկին Սարգիս եւ Հայկուհի Վահագններուն եւ եղբայրը՝ Կամակարգիչներու (Hard Drive) մասնագէտ գիտնական եւ երեսունէ աւելի Patent-ով գիւտերու հեղինակ Դոկտ. Արտեմ Փաթափութեանին: Արտեմ նաեւ եղած է «Նոր Կեանք» թերթի անգլերէն բաժինին խմբագիրը, 1986-1987 տարեշրջանին: Ան ամուսնացած է եւ կը բնակի Սան Տիէկոյի շրջանի Տէլ Մար գիւղաքաղաքին մէջ եւ կը դեկավարէ Novartis եւ Scripps Institute-ի գիտագոտական տարրալուծարանները:

### ՌԻԹԱ ՍՈՒԼԱՅԵԱՆ-ԳՈՒՅՈՒՄԵԱՆ

Շարունակում է 7-էն

րով, նուիրուած Յեղասպանութեան 95-ամեակին՝ մասնաւորաբար Արամ Անտոնեանին եւ Թէօդիկին, որոնք վերապրեցան Յեղասպանութիւնը:

Հեղինակը խօսեցաւ երեք հաստորներուն հարուստ բովանդակութեան, անոնց ներկայացուցած ցեղասպանագիտական կարեւորութեան եւ աղբիւրներուն մասին, որոնց ուսումնասիրութիւնը ներկայացուց սահիկներու օժանդակութեամբ ալ: Ռիթա Գուլումեան շնորհակալութիւն յայտնեց Թէքեան Մշակութային Միութեան Կեդրոնական վարչութեան, Պետեւեան ամուլին եւ Գուլումեան թոռներուն, որոնց նիւթական օժանդակութեամբ լոյս տեսած էին Եռահատորի երեք գիրքերը: Լոնտոնի «Կոմիտաս» հրատարակչականին աշխատանքին արդիւնքն է հատորաշարը: Արամ Սարաֆեան դեկավարն է «Կոմիտաս»-ին:

Առաջին գիրքը առ հասարակ կը վերաբերի Կոմիտաս վարդապետին դէպի Չանկըրը պարտադրաբար կատարած աքսորին եւ ստացած հոգեկան ցնցումներուն. Գուլումեան լայնօրէն օգտագործած է Արամ Անտոնեանի 25 յօդուածները՝ երեւցած Փարիզի «Արեւմուտք» թերթին մէջ, «Կոմիտասի» հետ: Ի՞նչ պայմաններու տակ յառաջացաւ Կոմիտասի մտքի տաղանակը» ընդհանուր խորագիրով: Անգլերէնի յաջող թարգմանութիւնը հարստացուցած է գործը: Հայ մամուլի սովորութեան համաձայն իւրաքանչիւր յօդուած կ'աւարտէր «շարունակելի» նշումով. 25րդը եւս նոյն «շարունակելի» բառը ունենալով հանդերձ, կը դադրի, ընթերցողը պարապութեան մը մէջ: «Արեւմուտք»-ը, որ շատ կարեւատեւ կեանքով թերթ մըն էր, յօդուածաշարքը հրատարակած էր Դեկտեմբեր 1946էն մինչեւ Յունիս 1947... իր փակումին թուականը: Գուլումեան գտնելով այդ յօդուածաշարքը եւ թարգմանելով զայն, նախաինամական գործ մը կատարած է, փրկելով զայն անխուսափելի մոռացումէ եւ նոյն ատեն՝ աւանդելով զայն ցեղասպանագիտութեան:

Գուլումեանի երկրորդ գիրքը վերնագրուած է «Teotig: Biography», հեղինակ Ռիթա Սիւլահեան-Գուլումեան: Թէոդիկի բժախնդրօրէն գրուած կենսագրութիւնը գիրքին առաջին բաժինը կը կազմէ երկրորդ մասը Արշալոյս Թէոդիկի կեանքին ու գործին նուիրուած է. երրորդ գլուխը՝ Բանասիրութեան եւ Աքսորի Տարիներ՝ 1915-1918 որ անմիջապէս կը յիշեցնէ Երուանդ Օտեանի «Անիծեալ Տարիները», չորրորդ գլուխը վերնագրուած է Աքսորէն Ետք՝ 1918-1928, իսկ հինգերորդ բաժինը նուիրուած է «Ամէնուն Տարեցոյցը՝ 1907-1929» Անտոնեանի կեանքի ամենէն կարեւոր գործին: Գիրքին երկրորդ գլխաւոր բաժինը՝ Monument to April 11 Թէոդիկի անստգիւտ կենսագրական կարճ կամ երկար ուսումնասիրութիւններն են՝ աքսորուած եւ սպաննուած գրողներուն, մտաւորականներուն, կրօնականներուն, կուսակցական եւ հասարակական գործիչներուն՝ թէ մայրաքաղաք Իսթանպուլին եւ թէ գաւառային քաղաքներէն՝ թիւով 763:

Լրացնելով Եռահատոր աշխատանքը, Ռիթա Գուլումեան իր երրորդ գիրքը նուիրած է վերապրող Արամ Անտոնեանին, վերապ-

րողը «The Survivor» խորագիրով: Արամ Անտոնեան (1875-1951, Սթանպուլի մէջ ձերբակալուածներէն մէկն էր: Աքսորի ճամբուն վրայ, պատահաբար թէ դիտումնաւոր կերպով, ան կը յաջողի գետին անկումով մը կողի ոսկորը կտորել եւ հիւանդանոց փոխադրուիլ՝ մինչ իր աքսորակիցները կը ջարդուին Անգարայի մօտ: Մինչեւ պատերազմի աւարտը՝ ճարպիկ Անտոնեան փախուստ կու տայ ու կը ձերբակալուի... 20 անգամ: Զինադարարէն ետք՝ 1918էն, իր ժամանակը կը յատկացնէ վերապրողներու պատումներուն: 1919ին Յեղասպանութեան յատուկ իր առաջին գործը կը հրատարակէ: «Մթին Տարիներ» գործին դրուատանքը կու գայ Յակոբ Օշականէն՝ որպէս ամբողջական պատկերացում Օսմանեան դաժանութեանց, ոստիկաններու վայրագութեանց, կիներու եւ փոքրերու զրկանքին, քաղցին ու անպատու տառապանքին: 1919ին Անտոնեան կը հրատարակէ նաեւ «Մեծ Ոճիրը» վաւերագրական արժեքաւոր գործը, ուր առաջին անգամ ըլլալով կը տպուին Հայկէպի մէջ օսմանցի պաշտօնեաներէն գնուած՝ Մեհմետ Թալէաթ ներքին գործերու նախարարին ստորագրութիւնը կրող բազմաթիւ հեռագիրները, որոնք շրջանային պետերուն կը հրահանգէին հայերու զանգուածային ջարդերն ու ոճրային գործողութիւնները կատարել առանց խղճի խայթի եւ մարդկային զգացումներու:

Անտոնեան պաշտօնի կոչուելով Պօղոս Նուպար Փաշայի կողմէ, կը ծառայէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փարիզի Նուպարեան Գրադարանին որու պատասխանատուի իր հանգամանքով, Փարիզի նացիական գրաւումի տարիներուն Նուպարեանէն կողոպտուած զրական եւ արուեստի հարստութիւնները կը յաջողի Պերլինէն վերադարձնել:

Անհրաժեշտ ընթերցումի գիրք մըն է այս հատորը անոնց համար, որոնք Արամ Անտոնեանի կենսագրութեան ընդմէջէն պիտի ծանօթանան Յեղասպանութեան ակառօնաբէր մը եւ վերապրողի մը վաւերական վկայութիւններուն:

Գուլումեանի շատ հետաքրքրական մեկնաբանութիւններէն եւ վերլուծումէն ետք մենախօս-դերակատար Լորի Թաթուլեան Անտոնեանէն թարգմանուած էջ մը կարդաց: Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արգումանեան իր անկեղծ խօսքերուն միացուց ցեղասպանագիտութիւնը հարստացնող այս գործերուն բարձր գնահատանքը:

REQUEST FOR PROPOSALS (RFP #7538) INFORMATION TECHNOLOGY (IT) SOURCING

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing IT Sourcing. A copy of the RFP may be obtained beginning September 27, 2010 at www.hacla.org/ps or call (213) 252-5405 or (213) 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by November 10, 2010 at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057.

10/7, 10/14/10  
CNS-1953104#  
MASSIS WEEKLY

### ՀՈԳԵՆԱՆՊԻՍ



ՀՈՒՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ

Հանգուցեալ ՀՈՒՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ մահուն քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Հոկտեմբեր 10, 2010ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Արշակ Ա. Սրկ. Գալէնտէրեան
- Զաւակները՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սեդա Գալէնտէրեան եւ զաւակունք (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան եւ զաւակունք
- Դուստրերը՝ Տէր եւ Տիկ. Ճօզէֆ եւ Նուէր Սէբրիլեան եւ զաւակունք (Քուէյթ)
- Տէր եւ Տիկ. Արշակ եւ Վարուհի Գազանճեան եւ զաւակունք
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սահակ եւ Ամալ Պիւքրիլեան եւ դուստրը (Պոսթոն)
- Տաղրը՝ Տէր եւ Տիկ. Պաղտասար Գալէնտէրեան (Աւստրալիա)
- Տալը՝ Ալլի Տիկ. Վեհանուշ Նասանեան (Կիպրոս)
- Թոռներն եւ համայն հարազատներն ու բարեկամները:

### ՄԱՐԶԴ



ԱՏՐԻՆԷ ՄԱԹՈՍԵԱՆ

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին ԱՏՐԻՆԷ ՄԱԹՈՍԵԱՆԻ անակնկալ մահը որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 2, 2010ին:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Հոկտեմբեր 7, 2010ին, ժամը 10:30ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ՝ 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA:

- Սգակիրներ՝ Ամուսինը Արամ Մաթոսեան
- Զաւակները՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Մարինա Մաթոսեան եւ զաւակները, Սարօ, Կարէն եւ Արմէն
- Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն եւ Սեդա Մաթոսեան եւ զաւակները՝ Դալար եւ Արամ
- Տօքթ. եւ Տիկ. Հմայեակ եւ Յուլիա Մաթոսեան եւ զաւակները Արման եւ Ատրինէ
- Քոյրերը՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Մայրանուշ Սողոմոնեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան եւ զաւակները Տ. Տաթեւ Ա. Քհնյ. եւ երէցկիւն Արաքի Թաթուլեան եւ զաւակները
- Եղբայները՝ Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Մակի Գօփուշեան եւ զաւակները Տիկ. Գարմէն Գօփուշեան եւ զաւակները եւ համայն Մաթոսեան, Գօփուշեան, Սողոմոնեան, Խպոյեան, Թաթուլեան ընտանիքները:
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ St. Gregory Armenian Apostolic Church 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

### ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆ. 125-ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 16-էն

մանքին:

Մասնաւորապէս, Բրեստ-Լիտուական բանակցութիւնների ժամանակ, որոնց Տէրեանը մասնակցել է որպէս խորհրդական՝ առանց ձայնի իրաւունքի, հերթական բուռն վէճից յետոյ զայրացած Տրոցկին Տէրեանին կոչել է «արմիաշկա» վերաբերական անունով: Տէրեանը բողոքել է հայկական տարածքները Թուրքիային յանձնելու Լեւ Տրոցկու մտադրութեան դէմ՝ որպէս իր բողոքի փաստարկ ներկայացնելով Մոսկուայից իր պահանջով ստացուած փաստաթղթերը: Դրանք վկայում էին, որ մինչ Առաջին համաշխարհային պատերազմն ու Մեծ Եղեռնը հայերն այդ տարածքներում կազմել են բնակչութեան մեծամասնութիւնը:

Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիտար Ստալինը իհարկէ չէր կարող համակերպուել եւ հանդուրժել այդպիսի սկզբունքային, անվախ եւ հայրենասէր տեղակալի, որ Հայկական գործերի կոմիտարիատի փաստացի ղեկավարն էր: Չէ որ այդ կոմիտարիատը ընդգրկուած էր Ազգութիւնների գործերի ժողովրդատի կազմում, իսկ նրա կոմիտար Վառլամ Աւանեսովն ի վիճակի չէր բաւարար ժամանակ յատկացնել հայկական հարցերին, քանի որ բացի այդ պաշտօնից զբաղեցնում էր եւս երկու՝ առաւել կարեւոր պաշտօններ՝ Համառուսաստանեան Կենտրոնի նա-


խագահութեան անդամի եւ նրա քարտուղարի պաշտօնները: Իր խարդաւանքներն իրականացնելիս Ստալինն օգտուել է հայ վաչ կոմունիստների՝ Հայաստանի կոմունիստական կուսակցութիւն կազմակերպութեան կենտրոնի անդամների ծառայութիւնից եւ վահան Տէրեանին հեռացրել է պաշտօնից՝ առանց պատճառների մասին յայտնելու: Իսկ այդ կազմակերպութիւնը Հայաստանից դուրս ստեղծել եւ ղեկավարում էր տիրահաշակ Գուրգէն Հայկունին:

Հայկունին Տէրեանի պաշտօնին աչք էր դրել եւ նախանձով էր լցուած պոէտի հանդէպ, քանի որ ինքն իրեն Տէրեանից առաւել տաղանդաւոր բանաստեղծ էր համարում: Այդ պատճառով էլ նա, եւ նրա կողմից ղեկավարուող Հայկունի կուսակցութեան կենտրոնի անդամները Տէրեանի եւ կոմիտարիատի նրա կողմնակիցների դէմ սանձազերծեցին հալածանքների, խարդաւանքների, ամբաստանութիւնների յաղթարշաւ: Արդիւնքում, 1919 թուականի Մայիսին Ռուսաստանի կոմկուսի կենտկոմը որոշում է կայացրել աշխատանքից հեռացուած, տուբերկուլիոզով հիւանդ Տէրեանին ռազմաճակատ ուղարկելու մասին, իսկ յետոյ, երբ բացայայտուել է այդ որոշման անհեթեթութիւնը, Հայկունու առաջարկով՝ Տէրեանին Ղրիմ ուղարկելու մասին որոշում է կայացուել:

(Շարունակելի)

### Հրապարակի վրայ է

«Յուշերու Բագին»  
 հեղինակ՝  
 Արմէն Ղարիպ  
 (տպ. Պէյրուք 2009)  
 Գինը՝ \$20



Ստանալու համար  
 դիմել «Մասիս»  
 Շաբաթաթերթին  
 1060 N Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 626-797-7680

### ՔԱՉ ՆԱԶԱՐ

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30  
 Կլէմտէյի 380-րդ կայանից

### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

### ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍԱՏԱՀԵԼԻ ԱՂԲԻԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԲԵՐՈՒ

# NOW OPEN!




# MISSION


*Wine & Spirits*

# Sherman Oaks

**13654 Burbank Blvd.  
Sherman Oaks, CA 91401  
(818) 785-6529**



**Glendale**  
825 W. Glenoaks Blvd.  
Glendale, CA 91202  
(818) 242-0683



**Pasadena**  
1785 E. Washington Blvd.  
Pasadena, CA 91104  
(626) 794-7026

